

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 6, 2008.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF CHITAEV AND CHITAEV v.RUSSIA - [Armenian Translation] by the
Association of Judges of the RA

**ՉԻՏԱԵՎԸ ԵՎ ՉԻՏԱԵՎՆ ԸՆԴԴԵՄ
ՌՈԼՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ**

2007թ. հունվարի 18-ի վճիռը

CASE OF CHITAEV AND CHITAEV v.RUSSIA

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

7. Դիմողները եղբայրներ են՝ ծնված համապատասխանաբար 1964թ. և 1967թ.: Նրանցից մեկն այժմ ապրում է Գերմանիայում, մյուսը՝ Ռուսաստանում, Իրկուտսկի շրջանում:

A. Ներկայացում

8. Գործի փաստերը, մասնավորապես՝ դիմողների կալանքի ժամանակահատվածին առնչվող փաստերը, մասամբ վեճի առարկա են կողմերի միջև:

9. Փաստերը, ինչպես ներկայացրել են դիմողները, շարադրված են ստորև՝ Բաժին B-ում (կետեր 10-62): Փաստերը, ինչպես ներկայացրել է Կառավարությունը, շարադրված են ստորև՝ Բաժին C-ում (կետեր 63-76): Կողմերի ներկայացրած փաստաթղթային ապացույցներն ամփոփված են ստորև՝ Բաժին D-ում (կետեր 77-95):

B. Դիմողների ներկայացրած փաստերը

1. Գործի նախապատմությունը

10. Մինչև ստորև ներկայացված իրադարձություններն առաջին դիմողը՝ ճարտարագետի մասնագիտությամբ, իր կնոջ և երկու երեխայի հետ բնակվել է Ստարայա Սանժայում, Գրոզնիի արվարձանում: Երկրորդ դիմողը՝ մասնագիտությամբ դպրոցի ուսուցիչ, բնակվել է Ղազախստանում և 1999թ. կնոջ և երկու երեխայի հետ տեղափոխվել է Չեչնիա:

11. 1999թ. հոկտեմբերին Չեչնիայում հակամարտություններ սկսվեցին Ռուսաստանի զինված ուժերի և Չեչնիայի ապստամբ մարտիկների միջև: Գրոզնի քաղաքը և նրա արվարձանները դարձան ռուսական զինված ուժերի լայնամասշտաբ գրոհների թիրախ: 2000թ. հոկտեմբերին Գրոզնիի բնակարանային գործակալությունը հաստատեց, որ այդ հակամարտությունների արդյունքում ավերվել է առաջին դիմողի բնակարանը:

12. Գրոհներից վախենալով՝ դիմողներն իրենց ընտանիքներին և արժեքավոր գույքը տեղափոխել էին իրենց ծնողների տուն (այսուհետ՝ Չիտանների ընտանիքի տուն), որը գտնվում էր Աչկո-Մարտանում, Մատրոսովի 28 հասցեում: Ըստ դիմողների՝ այդ տանը պահեստավորված գույքը ներառել է առաջին դիմողի մագնիտոֆոնը՝ hi fi համակարգով, տեսախցիկը և երկրորդ դիմողի հեռուստացույցը և տեսամագնիտոֆոնը: Տանը պահեստավորվել է այլ տեխնիկա և հագուստ: Փաստաթղթերը և արժեքավոր իրերի գնման անդորրագրերը պահվել են առանձին ճամպուկում: Հիմնական գույքը պահվել է տան սենյակներից մեկում և ձեղնահարկում:

2. Իրադարձությունները 2000թ. հունվար և ապրիլ ամիսների ընթացքում

13. 2000թ. հունվարի 15-ին Աչկո-Մարտանի շրջանի ներքին գործերի ժամանակավոր շրջանային բաժանմունքի («VOVD») ոստիկանները զինամթերք հայտնաբերելու նպատակով խուզարկել են Մատրոսովի 28 հասցեում գտնվող տունը: Ըստ դիմողների՝ խուզարկությունը պաշտոնապես թույլատրված կամ փաստաթղթերով հիմնավորված չի եղել: Ոստիկաններն իրենց հետ տարել են մոր փաթեթով անլար հեռախոս՝ մարտկոցներով և ընդունիչով:

14. 2000թ. հունվարի 18-ին երկրորդ դիմողը դիմել է Աչկո-Մարտանի VOVN-ի ղեկավարին՝ բողոքելով, որ խուզարկությունը եղել է ապօրինի և խնդրել է վերադարձնել հեռախոսը: 2000թ. մարտի սկզբներին, դիմողների հոր՝ շրջանային զինվորական դատախազին հղված դիմումից հետո, հեռախոսը վերադարձվել է:

15. 2000թ. ապրիլի 12-ին մոտավորապես ժամը 8-ին կամ 9-ին Աչկո-Մարտանի VOVN-ի մի քանի ոստիկաններ կրկին ժամանել են Մատրոսովի փողոցի 28 հասցեում գտնվող տուն: Այդ ժամանակ դիմողները և նրանց ընտանիքները գտնվել են տանը: Ոստիկանները խուզարկել են տունը՝ առանց որևէ սանկցիա կամ խուզարկությունը հիմնավորող որևէ փաստաթուղթ ներկայացնելու: Նրանք առգրավել են էլեկտրական տեխնիկայի մի քանի տեսակներ, դրանց փաստաթղթերը և ընտանիքների անդամներին պատկանող անձնական փաստաթղթեր: Այնուհետև, ոստիկանները խնդրել են դիմողներին իրենց հետ գնալ Աչկո-Մարտանի VOVN՝ փաստաթղթային աշխատանքում մի քանի ժամ իրենց օգնելու համար:

16. Ըստ դիմողների՝ երբ նրանք մեքենա են նստել, նրանց հայտարարել են, որ իրենք ձերբակալված են, և սկսել են իրենց ծեծել: Դիմողները տարվել են Աչկո-Մարտանի VOVD և պահվել առանձին խցերում:

17. Նույն օրը, կեսօրին՝ ժամը 12-ին, դիմողների տունը կրկին խուզարկվել է: Սոտ 30 ծառայող երկու մեքենայով ժամանել են տուն՝ տարել տանը գտնվող ամբողջ էլեկտրական տեխնիկան, ներառյալ՝ տպիչը, հեռուստացույցները և տեսամագնիտոֆոնը: Որևէ պաշտոնական հիմնավորում խուզարկության և առգրավման կապակցությամբ չի ներկայացվել: Դիմողները ներկայացրել են տանն առգրավված իրերի ցանկը (տես ստորև՝ կետ 77):

3. Դիմողների կալանքը Աչկո-Մարտանի VOVD-ում

18. 2000թ. ապրիլի 12-28-ը դիմողները կալանքի տակ են գտնվել Աչկո-Մարտանի VOVD-ում: Կալանքի տակ գտնվելու ընթացքում նրանք հարցաքննվել են Չեչնիայի ապստամբ մարտիկների գործունեության և փրկագնի դիմաց մարդկանց առևանգումների առնչությամբ, սակայն ժխտել են իրենց մասնակցությունը որևէ հանցագործության:

(a) Դիմողների նկատմամբ վատ վերաբերմունքը

19. Կալանքի և հարցաքննությունների ընթացքում, որոնք տեղի են ունեցել Աչկո-Մարտանի VOVD-ի շենքի երրորդ հարկում գտնվող խցում, դիմողները ենթարկվել են խոշտանգման կամ տարբեր ձևերի վատ վերաբերմունքի: Մասնավորապես, նրանք կապվել են աթոռին և ծեծվել, մարմնի տարբեր մասերի նկատմամբ, ներառյալ՝ նրանց մատների ծայրերը և ականջները, կիրառվել է էլեկտրաշոկ, նրանց երկար ժամանակ ստիպել են կանգնել ձեռքերն ու ոտքերը լայն բացած վիճակում, նրանց ոտքերը դողում էին, նրանց ծեծել են ռետինե մահակներով և ջրով լի պլաստիկ շշերով, նրանց շնչառելը են արել ժապավենով, պոլիէթիլենե թաղանթից պայուսակով և գազի դիմակով, նրանց վրա շներ են արձակել, նրանց մաշկից առանձին հատվածներ են պոկել քրքամով:

20. Առաջին դիմողին հարցաքննել են կալանքի առաջին օրը և ստիպել են ստորագրել ինքնախոստովանություն: Մերժում ստանալով՝ նրան կապել են աթոռին և սկսել ծեծել: Նրան հագցրել են գազի դիմակ և ծխախոտի ծուխ են ներմղել: Առաջին դիմողը գիտակցությունը կորցրել է և հետ բերվել խուց: Հաջորդ օրը նրան կրկին հարցաքննել են նույն սենյակում: Նրա մատներին լարեր են կապել, և հարցաքննողները պատել են իրենց կողմից «ստի ալեփոխարկիչ» կոչվող սարքավորման բռնակը, որը նրան էլեկտրաշոկի է ենթարկել:

21. Երկրորդ դիմողը ևս հարցաքննվել է կալանքի առաջին օրը: Նա տարվել է մի սենյակ, ուր եղել է երկու ոստիկան, որոնք նրանից պահանջել են խոստովանել, որ ինքն ապստամբ մարտիկ է և մասնակից է առևանգումների: Երբ հրաժարվել է խոստովանելուց, կանգնեցվել է պատի մոտ, ձեռնաշղթայվել և բերանը կապվել է ժապավենով: Ոստիկաններից մեկն սկսել է հարվածել մեջքին և սեռական օրգաններին, իսկ մյուսը պահել է ատրճանակը՝ վախեցնելով, թե շարժվելու դեպքում կկրակի: Երկրորդ դիմողին ծեծել են մեկ ժամ և հետո հետ բերել խուց:

22. Տարբեր առիթներով կալանքի ընթացքում Աչկո-Մարտանի VOVD-ի անձնակազմը գալիս էր խցեր և ծեծի ենթարկում այնտեղ գտնվողներին, այդ թվում՝ դիմողներին:

(b) Կալանքի պայմանները

23. Խցերում զուգարան չկար, և կալանավորներին հերթով տանում էին դուրս՝ զուգարան: Դրսում զուգարան հասնելու ողջ ճանապարհին նրանց պարտադրվում էր վազել, և եթե դանդաղում էին, ծեծվում էին հրացանի խզակոթով և նրանց վրա շներ էին արձակվում: Ջուգարանում նրանց բավարար ժամանակ չէին թողնում մնալ: Երբեմն նրանց չեն թողել գնալ զուգարան և ստիպել են իրենց պետքերը հոգալ միջանցքում՝ հսկիչների ներկայությամբ:

24. Խցերը չեն ջեռուցել և եղել են խոնավ, և կալանավորներն ստիպված մշտապես մրսել են:

4. Դիմողների կալանքը Չեռնոկոզովո SIZO-ում

25. Ըստ դիմողների՝ 2000թ. ապրիլի 28-ին իրենք և մի քանի այլ կալանավորներ դուրս են բերվել Աչկո-Մարտանի VOVD-ից և աչքերը կապված վիճակում նստեցվել մեքենա: Հսկիչներն ասել են, որ իրենց տանում են մահապատժի ենթարկելու: Սակայն դրա փոխարեն կալանավորները, այդ թվում նաև դիմողները, տարվել են այլ կալանավայր: Հետագայում նրանք պարզել են, որ դա Չեռնոկոզովոյի կա-

լանավայրն է (այսուհետ՝ Չեռնոկոզովո SIZO): Կալանավորներին, այդ թվում նաև դիմողներին, դուրս են բերել մեքենայից, ստիպել ծնկի գալ և սկսել են ծեծել: Նրանց տեղավորել են խցերում:

26. Դիմողներին Չեռնոկոզովո SIZO-ում ընդունելիս չեն ենթարկել համապատասխան օրենսդրությամբ նախատեսված բժշկական զննման:

(a) Դիմողների նկատմամբ վատ վերաբերմունքը

27. Չեռնոկոզովո SIZO-ում գտնվելու ընթացքում դիմողներն սկզբում հարցաքննվել են երկու օրը մեկ անգամ, հետագայում՝ շաբաթը մեկ անգամ: Հարցաքննության սենյակ գնալիս նրանց ստիպել են գլուխները խոնարհել, ձեռքերը դնել ծոծրակին, իսկ հսկիչները հետևից հարվածել են նրանց: Հարցաքննության սենյակում եղել է մեկ մետաղյա սեղան, մեկ աթոռ և պատի վրա մեկ կախիչ: Հարցաքննողները երբևէ չեն կազմել հարցաքննության արձանագրություն, նրանց վրա ճնշում են գործադրել ինքնախոստովանություն կորզելու նպատակով կամ պարզապես ծեծել են նրանց: Հարցաքննողները դիմողների մարմնի տարբեր մասերի, մասնավորապես ծնկներին, հարվածել են նաև կոշիկներով, ատրճանակի խզակոթով, նրանց վախեցրել են դանակը մատներին սեղմած, հագցրել են բրեզենտե ձեռնոցներ և ձեռքերը կապել կախիչից ու ծեծել նրանց, մուրճի կամ չիրկիզվող պահարանի դռան տակ ճգմել են ձեռքի և ոտքի մատները, դիմողներին չնրահեղձ են արել ժապավենով կամ պոլիէթիլենե թաղանթից պայուսակով և նրանց մատները ենթարկել են էլեկտրաշոկի ազդեցությանը:

28. Դիմողներին ծեծել են նաև հսկիչները, երբ նրանց դուրս են բերել խցերից՝ մի քանի րոպե «մարմնամարզության» համար:

29. Դիմողների պաշտպան պրն Շարիփ Տեփսաևը Չեռնոկոզովո SIZO-ում դիմողների գտնվելու ընթացքում միայն մեկ անգամ՝ 2000թ. մայիսին է կարողացել տեսակցել նրանց: Դիմողներին թույլատրվել է մեկը մյուսի հետևից տեսակցել պաշտպանին՝ ոստիկանի ներկայությամբ: Տեսակցության ժամանակ նրանց ստիպել են խոսել ռուսերեն և պաշտպանը կարողացել է հարցնել միայն նրանց որպիսության մասին:

(b) Կալանքի պայմանները

30. Չեռնոկոզովո SIZO-ում կալանքի ընթացքում դիմողները պահվել են առանձին խցերում, բացառությամբ՝ 2000թ. հուլիսի մի քանի օրերի, երբ պահվել են մույն խցում:

31. Երկրորդ դիմողը մեկուկես ամիս անցկացրել է թիվ 5 խցում և մնացած մեկուկես ամիսը՝ թիվ 20 խցում: Կալանքի մնացած ժամկետը երկրորդ դիմողն անցկացրել է թիվ 27 խցում: Վերջինս նախատեսված էր երեք կալանավորի համար, մինչդեռ այնտեղ պահվել են 6-ից ոչ պակաս կալանավորներ: Երկրորդ դիմողը ստիպված է եղել քնել հատակին՝ իրեն տրված ներքնակի վրա:

32. Ըստ դիմողների՝ կալանքի պայմանները բարելավվել են 2000թ. հունիսին՝ այն բանից հետո, երբ հսկիչները փոխարինվել են մոր հերթափոխով, և 2000թ. հունիսի 14-ին Չեռնոկոզովո SIZO են այցելել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) ներկայացուցիչները: Երկրորդ դիմողը ԿԽՄԿ-ի ներկայացուցիչների հետ խոսել է անձամբ՝ խորհրդապահական գրույցի ժամանակ, քանի որ տիրապետել է անգլերենին:

33. ԿԽՄԿ-ի ներկայացուցիչները ևս երկու անգամ այցելել են 2000թ. օգոստոսին: Այս այցերը դիմողներին հնարավորություն է տվել տեղեկություններ փոխանակել իրենց ընտանիքների հետ: 2001թ. հունվարին ԿԽՄԿ-ի Կաբարդինա-Բալկարական Հանրապետության Նալչիկի գրասենյակը դիմողներին տվել է տեղեկանք առ այն, որ իրենք հունիսի 14-ին, օգոստոսի 11-ին և օգոստոսի 23-ին այցելել են դիմողներին՝ Չեռնոկոզովո SIZO-ում:

5. Դիմողների ազատ արձակումը

34. 2000թ. սեպտեմբերի 19-ին դիմողները հետ են բերվել Աչկո-Մարտանի VOVD և նրանց հայտնել են, որ մեղադրվում են մարդկանց առևանգման և անօրինական զինված խմբավորումներին մասնակցության համար՝ ըստ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 126 (2) և 208 (2) հոդվածների: Դա առաջին անգամն էր, որ նրանք պաշտոնապես տեղեկացվել են իրենց ներկայացված մեղադրանքների մասին:

35. 2000թ. հոկտեմբերի 5-ին դիմողներին ազատ են արձակել՝ պայմանով, որ չեն հեռանա իրենց բնակության վայրից:

36. 2000թ. հոկտեմբերի 6-ին դիմողներն իրենց հարազատների կողմից տարվել են Աչկո-Մարտանի հիվանդանոց: Նրանց հետազոտել են ընդհանուր մասնագիտությամբ բժիշկը, նյարդաբանը և վիրա-

բույժը: Առաջին դիմողին ախտորոշել են գանգուղեղային վնասվածքներ, որոնք հանգեցրել են ներգանգային հիպերտենզիայի և հետվնասվածքային սթրեսային խանգարումների, ինչպես նաև քրոնիկ բրոնխիտ, քրոնիկ երկկողմանի պիելոնեֆրիտ, նյարդաթուլագարության ախտանիշ, հիպքրոմ սակավարյունություն, բազմաթիվ փակ վնասվածքներ գլխին, մարմնին ու վերջույթներին, և ձախ թոքի քրոնիկ թոքաբորբ: Երկրորդ դիմողին ախտորոշել են կրկնված գանգուղեղային վնասվածքներ, որոնք հանգեցրել են ներգանգային հիպերտենզիայի և հետվնասվածքային սթրեսային խանգարումների, ինչպես նաև բազմաթիվ փակ վնասվածքներ գլխին, մարմնին և վերջույթներին և ձախ ծնկոսկրի վնասվածք, ձախ թոքի քրոնիկ թոքաբորբ և երկկողմանի քրոնիկ պիելոնեֆրիտ: Բժիշկները նշել են, որ վնասվածքները և մյուս ախտանիշները ծեռք են բերվել 2000թ. ապրիլից մինչև հոկտեմբեր 2000թ. SIZO-ում գտնվելու ժամանակ:

37. 2000թ. հոկտեմբերի 9-ի նամակներով Ալկո-Մարտանի շրջանային դատախազությունը դիմողներին տեղեկացրել է, որ իրենց դեմ քրեական օրենսգրքի 126 (2) և 208 (2) հոդվածների հիման վրա հարուցված թիվ 59212 քրեական գործը կարճվել է 2000թ. հոկտեմբերի 9-ին, քանզի տվյալ հանցագործությունների կատարման իրենց մասնակցությունը չի ապացուցվել: Նամակներում նշվել էր, որ նրանք ազատվում են իրենց բնակության վայրից չհեռանալու պարտականությունից և կարող են 2000թ. հոկտեմբերի 9-ի որոշումը հնգօրյա ժամկետում բողոքարկել վերադաս դատախազին կամ դատարան:

6. Դիմումներ պետական մարմիններին

38. 2000թ. ապրիլի 12-ից սկսած դիմողների հարազատները շարունակաբար դիմել են տարբեր պաշտոնական մարմինների՝ իրենց տանը կատարված խուզարկության և առգրավումների, ինչպես նաև 2000թ. ապրիլի 12-ին դիմողների ձերբակալության և հետազայում՝ կալանավորման կապակցությամբ: Դիմողներն ազատ արձակվելուց հետո այս առումով միացել են իրենց հարազատներին: Նրանց աջակցել են մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններ: Սակայն արդյունքներն աննշան էին: Հաճախ դիմողների հարազատներն ստանում էին տարբեր մարմինների նամակների պատճեններ, որոնցով այդ մարմիններն իրենց ուղղված բողոքները վերահասցեագրում էին շրջանային դատախազությանը, Ալկո-Մարտանի VOVD կամ Զեչնիայի Հանրապետության դատախազությանը:

39. 2002թ. ապրիլի 12-ին դիմողների հարազատները գնացել են Ալկո-Մարտանի VOVD և հետաքրքրվել նրանց որպիսության մասին: Նրանց ասել են, որ Զիտան եղբայրներին խնդրել են իրենց օգնել փաստաթղթային ձևակերպումներում և շուտով կվերադառնան տուն: Դիմողներն այդ օրը չեն վերադարձել:

40. 2000թ. ապրիլի 14-ին դիմողների հայրը գնացել է Ալկո-Մարտանի VOVD՝ իր որդիներին այնտեղ փնտրելու: Պաշտոնատար անձինք նրան տեղեկացրել են, որ իր որդիները կալանավորվել են ռուս զինվորների՝ փրկագնի դիմաց առևանգելու մեղադրանքով: Կասկածը ենթադրաբար հիմնվում էր նրանց տանը զինվորական վերարկուներ հայտնաբերելու փաստի վրա: Դիմողի հայրը նրանց հայտնել է, որ դա խորհրդային բանակում հնում գործածված զինվորական վերարկուներ են, որոնք այլևս բանակում չի օգտագործվում, և դրանք իր որդիները բերել են խորհրդային բանակում ծառայությունից հետո, և դրանք այժմ ինքն է գործածում տնային տարբեր աշխատանքներ կատարելիս:

41. 2000թ. ապրիլի 22-ին Մարդու իրավունքների կենտրոնը Զիտանների ընտանիքի անունից դիմել է Զեչնիայի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության Նախագահի՝ Մարդու իրավունքների և ազատությունների հարցերով ներկայացուցչին՝ պարզելու համար 2000թ. ապրիլի 12-ին դիմողների ձերբակալության պատճառները և պնդել է, որ խուզարկությունները, առգրավումները և ձերբակալությունները եղել են ապօրինի:

42. 2000թ. մայիսի 18-ի նամակով Ներքին գործերի նախարարը պատասխանել է Պետական դումայի պատգամավորի՝ դիմողների անունից կատարված հարցմանը: Նամակում նշվել է, որ դիմողների նկատմամբ քրեական գործ է հարուցվել շրջանային դատախազության կողմից՝ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 126 (2) և 208 (2) հոդվածներով նախատեսված հանցագործություններ կատարելու կասկածանքով: Նամակում նշվել է նաև, որ 2000թ. ապրիլի 12-ին գործն ուղարկվել է Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության գլխավոր վարչություն՝ Զեչնիայում զինված գործողություններին վերաբերող այլ գործերի հետ միավորելու համար, նշվել է նաև, որ հետագա տեղեկությունները կարող են ստանալ այդ վարչությունից:

43. 2000թ. մայիսի 20-ին հանրապետական դատախազությունը դիմողների եղբորը տեղեկացրել է, որ դիմողների գործով քրեական վարույթն իրականացնում է Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի

Դաշնության գլխավոր դատախազության գլխավոր վարչությունը, և հետագա հարցումները պետք է ուղղվեն այդ վարչությանը:

44. 2000թ. մայիսի 22-ին դիմողների հայրը գույքի առգրավման կապակցությամբ դիմել է Աշկո-Մարտանի VOVD-ի ղեկավարին: Վերջինս անթվակիր նամակով պատասխանել է, որ Զիտանների ընտանիքին պատկանող տնից առգրավված իրերը չեն գրանցվել որպես Աշկո-Մարտանի VOVD-ում պահվող իրեր: Նամակում նշվել է նաև, որ Աշկո-Մարտանի շրջանային դատախազությունը քրեական գործ է հարուցել ընդդեմ դիմողների, սակայն չի նշել հարուցման ամսաթիվը: Նշվել է նաև, որ այդ վարույթի շրջանակներում ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համաձայն «դեպքի վայրի զննում է» իրականացվել Զիտանների տանը: Ավելին, զննման արձանագրությունը գտնվում է դիմողների դեմ հարուցված գործի նյութերում, այդ արձանագրության մեջ նշված է նաև այդ զննման ժամանակ Զիտանների տնից առգրավված իրերի ցանկը: Նամակը եզրափակվել է նշումով առայն, որ առգրավված իրերը պետք է պահվեն գործում, և դիմողների հայրը հետագա տեղեկությունների համար կարող է դիմել հանրապետական դատախազություն:

45. 2000թ. հուլիսի 4-ին դիմողների եղբայրը դիմողների 2000թ. ապրիլի 12-ի անօրինական կալանքի, ինչպես նաև խուզարկությունների և առգրավումների կապակցությամբ դիմել է Զեչնիայի Զանրապետությունում Ռուսաստանի Դաշնության Նախագահի՝ Մարդու իրավունքների և ազատությունների հարցերով ներկայացուցչին:

46. 2000թ. հուլիսի 26-ին Աշկո-Մարտանի VOVD-ի ղեկավարի տեղակալը դիմողների հորը տեղեկացրել է, որ նրանք Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքի 122 հոդվածի հիման վրա կալանավորվել են 2000թ. ապրիլի 17-ին (ապրիլի 12-ի փոխարեն):

47. 2000թ. հուլիսի 28-ին Աշկո-Մարտանի VOVD-ի նույն պաշտոնյան տեղեկացրել է դիմողի հորը, որ իրենց տնից առգրավված իրերը կցված են քրեական գործին, և դրանք վերադարձնելու մասին որոշում կարող է կայացնել վարույթն իրականացնող մարմինը կամ դատարանը:

48. Դիմողի հայրն իրենց տանը կատարված խուզարկությունների և առգրավումների, ինչպես նաև դիմողների՝ 2000թ. ապրիլի 12-ի կալանավորման անօրինականության կապակցությամբ դիմել է հանրապետական դատախազություն:

49. 2000թ. սեպտեմբերի 7-ին հանրապետական դատախազությունից պատասխանել են, որ դիմողները ձերբակալվել են Ռուսաստանի քրեական օրենսգրքի 126(2) և 208 (2) հոդվածների հիման վրա առաջադրված մեղադրանքների, այն է՝ մարդկանց առևանգման և անօրինական զինված խմբավորումներին մասնակցության կապակցությամբ, և որ նրանց կալանքի ժամկետը հանրապետական դատախազի կողմից երկարացվել է մինչև 2000թ. հոկտեմբերի 9-ը՝ չնշելով, թե երբ է կայացվել երկարացման որոշումը: Դիմողների հորն առաջարկվել են դատավարության հետագա ընթացքի մասին տեղեկություններ ստանալ շրջանային դատախազությունից:

50. 2000թ. հոկտեմբերի 18-ին հանրապետական դատախազությունը դիմողների եղբորը տեղեկացրել է, որ Զիտանների տանը կատարված խուզարկությունների և առգրավումների, ինչպես նաև դիմողների կալանքի անօրինականության վերաբերյալ իր բողոքի արդյունքում Աշկո-Մարտանի VOVD-ի ներքին անվտանգության ստորաբաժանումը ծառայողական ստուգում է սկսել իր եղբայրներին պատկանող «ռադիոսարքավորումները և անձնական գույքը» առգրավելու և ոչնչացնելու կապակցությամբ: Նամակում նաև նշվել է, որ դիմողները 2000թ. հոկտեմբերի 4-ին ազատ են արձակվել՝ իրենց մշտական բնակության վայրից չհեռանալու պայմանով:

51. 2001թ. հունիսի 1-ին դիմողների եղբայրը դիմել է հանրապետական դատախազություն՝ 2000թ. ապրիլին իրենց տնից առգրավված գույքի կապակցությամբ:

52. 2001թ. հոկտեմբերի 5-ին SRJI-ն դիմողների անունից դիմել է հանրապետական դատախազություն՝ մանրամասն նկարագրելով Աշկո-Մարտանի VOVD-ում և Զեչնոկոզովո SIZO-ում կալանքի ընթացքում՝ 2000թ. ապրիլի 12-ից մինչև հոկտեմբերի 5-ը, դիմողների նկատմամբ դրսևորված դաժան վերաբերմունքը և դատավարական նորմերի խախտումները: Նամակում որպես նշված պնդումների հավաստում հղում է կատարվել բժշկական եզրակացություններին և պահանջ է ներկայացվել քրեական գործ հարուցել դիմողների պնդումների առնչությամբ: Նամակի պատճենը փոխանցվել է գլխավոր դատախազություն: Ի պատասխան նամակի՝ 2001թ. հոկտեմբերի 25-ին նշվել է, որ բողոքն ուղարկվել է հանրապետական դատախազություն:

53. 2001թ. հոկտեմբերի 29-ին դիմողների եղբայրը Աշկո-Մարտանի VOVD-ից պահանջել է տեղեկություններ հաղորդել 2000թ. ապրիլին գույքի առգրավման կապակցությամբ սկսված ծառայողական ստուգման վերաբերյալ: 2002թ. հունվարի 3-ին կրկին դիմել է նույն պահանջով: Սակայն այդ պահանջները մնացել են անարձագանք:

54. 2001թ. նոյեմբերի 22-ին և 2002թ. հունվարի 24-ին SRJI-ն կրկին դիմել է հանրապետական դատախազություն՝ վկայակոչելով իրենց 2001թ. հոկտեմբերի 5-ի նամակը: 2002թ. հունվարի 29-ին նույն տեղեկությունը նրանք պահանջել են շրջանային դատախազությունից:

55. 2002թ. սկզբին Չիտանների ընտանիքի բոլոր արական սեռի ներկայացուցիչները ստացել են ծանուցագիր 2002թ. հունվարի 7-ին շրջանային դատախազություն ներկայանալու վերաբերյալ: Առաջին դիմողն այդ ժամանակ Չեչնիայում չէր, ուստի ներկայացել են երկրորդ դիմողը, հայրը և եղբայրը: Նրանց առանձին-առանձին հրավիրել են խոսելու դատախազության քննիչի հետ:

56. Ըստ երկրորդ դիմողի՝ Աչկո-Մարտանի շրջանային դատախազը և դատախազության քննիչն առաջարկել են գրել հայտարարություն, որով պետք է հրաժարվեն կալանքի անօրինականության և կալանքի պայմանների վերաբերյալ Աչկո-Մարտանի VOVD-ի դեմ ներկայացված բողոքներից: Այլապես, սպառնացել են վերսկսել երկու դիմողների դեմ քրեական գործի վարույթը: Երկրորդ դիմողին թույլատրվել է խորհրդակցել իր ընտանիքի անդամների հետ, որից հետո որոշել է ստորագրել պահանջվող հայտարարությունը:

57. 2002թ. հունվարի 7-ի նամակով դատախազության քննիչը պատասխանել է SRJI-ին՝ նշելով, որ դատախազությունը որոշել է քրեական գործ չհարուցել: Նամակում չի նշվել այդ որոշման հիմքերի մասին, սակայն SRJI-ն տեղեկացվել է այդ որոշումը բողոքարկելու հնարավորության մասին: Նամակին 2002թ. հունվարի 7-ի որոշումը չի կցվել:

58. 2002թ. մարտի 14-ին 2002թ. հունվարի 7-ի որոշումը SRJI-ն բողոքարկել է հանրապետական դատախազին: Կից ներկայացվել է 2001թ. հոկտեմբերի 5-ի բողոքը՝ նշելով, որ երկրորդ դիմողի վրա ճնշում է գործադրվել՝ ստիպելով նրան հրաժարվել վատ վերաբերմունքի վերաբերյալ իր հայտարարությունից, ինչպես նաև կրկնվել է՝ քրեական գործ հարուցելու պահանջը՝ Աչկո-Մարտանի VOVD-ում և Չեչնոկոգովո SIZO-ում դիմողների մատնանշած վատ վերաբերմունքի կապակցությամբ:

59. 2002թ. մարտի 18-ի նամակով Աչկո-Մարտանի շրջանային գործող դատախազը SRJI-ին տեղեկացրել է, որ շրջանային դատախազությունն ուսումնասիրել է դիմողների նկատմամբ կիրառված «քննությանը խորթ մեթոդների» վերաբերյալ գանգատը և որոշել է քրեական գործ չհարուցել՝ Աչկո-Մարտանի VOVD-ի աշխատակիցների արարքում հանցակազմի բացակայության պատճառով: Նամակում նաև նշվել է, որ երկրորդ դիմողը հրավիրվել է շրջանային դատախազություն, որտեղ նա հաստատել է Աչկո-Մարտանի VOVD-ում և Չեչնոկոգովո SIZO-ում իր կալանքի փաստը, սակայն ժխտել է, որ իր նկատմամբ երբևէ կիրառվել են «քննությանը խորթ մեթոդներ», իսկ առաջին դիմողին հարցաքննել չի հաջողվել, քանի որ նա բացակայել է Չեչնիայից: Նամակում նաև նշվել է, որ ձեռք չի բերվել ենթադրյալ վատ վերաբերմունքը հիմնավորող որևէ օբյեկտիվ ապացույց, և որ SRJI-ն արդեն 2002թ. հունվարի 7-ի թիվ 105 նամակով տեղեկացվել է նրանց գանգատի քննության արդյունքների մասին:

60. 2002թ. ապրիլի 24-ին դիմողների եղբայրը դիմել է հանրապետական դատախազություն՝ պահանջելով տեղեկատվություն իրենց տանը կատարված խուզարկությունների և առգրավումների վերաբերյալ գանգատի կապակցությամբ սկսված ծառայողական ստուգման ընթացքի մասին: Որևէ պատասխան այս պահանջին չի հետևել:

61. 2002թ. մայիսի 6-ին հանրապետական դատախազությունը պատասխանել է SRJI-ի 2002թ. մարտի 14-ի բողոքին՝ տեղեկացնելով, որ 2002թ. հունվարի 7-ի որոշումը վերացնելու վերաբերյալ իրենց պահանջի կապակցությամբ իրականացվում է ծառայողական ստուգում: Նամակում նշվել է, որ «Աչկո-Մարտանի VOVD-ի և Չեչնոկոգովո SIZO-ի անձնակազմի կողմից դրսևորված վատ վերաբերմունքի կապակցությամբ դիմողների բողոքի առնչությամբ քրեական գործ չհարուցելու՝ շրջանային դատախազի որոշումը հիմնավոր է և օրինական, և այդ կապակցությամբ բողոքներն անհիմն են»:

62. SRJI-ն շրջանային դատախազից պահանջել է իրենց ուղարկել 2000թ. ապրիլի 12-ից մինչև հոկտեմբերի 5-ը դիմողների կալանքի ընթացքում նրանց նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2002թ. հունվարի 7-ի որոշման պատճենը: 2003թ. մարտի 24-ին շրջանային դատախազը պատասխանել է, որ SRJI-ն ծանուցվել է իրենց բողոքի քննության արդյունքների և բողոքարկման իրենց իրավունքի մասին, և որ այդ պահին գործող Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքի համաձայն քննիչը պարտավոր չէ նման որոշման պատճենը տրամադրել քրեական գործի հարուցում հայցող անձին: Պատասխանում նշվել է նաև, որ երկրորդ դիմողը տեղեկացվել է խնդրո առարկա փաստաթղթի մասին:

C. Կառավարության կողմից ներկայացված՝ գործի փաստերը

63. 2000թ. հունվարի 15-ին Աչկո-Մարտանի VOVD-ի աշխատակիցներն անձնագրային ստուգում են իրականացրել Աչկո-Մարտանում: Մատրոսովի փողոցի 32 տանը (և ոչ 28) դիմողների հայրը կամավոր հանձնել է FT-26 ռադիոընդունիչ և դրան պատկանող սարքավորում, օտար լեզվով դրա տեխնի-

կական փաստաթղթերը, զինծառայող Բ.-ի անձնական զինվորական գրքույկը, ով նախկինում առևանգվել էր անհայտ անձանց կողմից, զինվորական ժամացույց, ավտոմեքենաների ու տրակտորների 11 համարանիշներ: Կամավոր հանձնումից հետո, նույն օրը կազմվել է պաշտոնական ակտ, և 2000թ. փետրվարի 4-ին Աչկո-Մարտանի VOVD-ն որոշել է այս կապակցությամբ քրեական գործ չհարուցել:

64. 2000թ. հունվարի 15-ի ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկատվության հիման վրա դիմողների տանն Աչկո-Մարտանի VOVD-ի ոստիկան պրն Ս. Վասենկոյի կողմից ընթերակաների ներկայությամբ իրականացվել է «զննում»: Այդ զննման ժամանակ ոստիկան Վասենկոն հայտնաբերել է ութ զինվորական վերարկու և չորս բաճկոն, որոնք բոլորն էլ կրում էին զինծառայողների համարներ և անձնական տվյալներ, ռադիոհաղորդիչ սարքավորման դետալներ, Շամիլ Բասաևի հարցազրույցների տեսաժապավեններ, «Նոկչո Չեչնիա-Ազատության օր» վավերագրական ֆիլմի տեսաձայնագրություն, արտաշիրման լուսանկարներ, առաջին դիմողի զինված լուսանկարներ, համակարգիչ և 1998թ. Չեչնիայի կառավարության անդամների ռադիո և հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունը պարունակող համակարգչային սկավառակներ, Չեչնիայի բարձրաստիճան պաշտոնյաների և ապօրինի զինված խմբավորումների առաջնորդների մոբիլ հեռախոսների համարների ցուցակ, գաղտնալսման սարքեր և այլ նյութեր, որոնք, ըստ Կառավարության՝ «կարող էին վկայել դիմողների՝ ապօրինի զինված խմբավորումներին մասնակցության մասին»:

65. 2000թ. ապրիլի 17-ին՝ 2000թ. հունվարի 15-ի ստուգման և 2000թ. ապրիլի 15-ի զննման արդյունքների հիման վրա Աչկո-Մարտանի շրջանային դատախազությունը քրեական գործ է հարուցել ընդդեմ դիմողների՝ Ռուսաստանի քրեական օրենսգրքի 126(2) հոդվածի (ժանրացուցիչ հանգամանքներում կատարված առևանգում) և 208 (2) հոդվածի հիման վրա (մասնակցություն ապօրինի զինված խմբավորումներին): Քրեական գործի համարն է 26009 և այնուհետև՝ 59212:

66. Նույն օրը դիմողները Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքի 122 հոդվածի համաձայն՝ կալանքի են վերցվել և պահվել Աչկո-Մարտանի VOVD-ում:

67. 2000թ. ապրիլի 18-ին շրջանային դատախազը վերացրել է 2000թ. փետրվարի 7-ի որոշումը՝ այն հիմքով, որ 2000թ. հունվարի 15-ի զննման ընթացքում հայտնաբերված իրերի բացահայտման հանգամանքների հետաքննությունը լիարժեք չէ, և որ այդ զննման նյութերը ներառվել են դիմողների դեմ հարուցված քրեական գործի նյութերում:

68. 2000թ. ապրիլի 19-ին շրջանային դատախազը կարգադրել է որպես խափանման միջոց դիմողների նկատմամբ կիրառել կալանք՝ առևանգման և ապօրինի զինված խմբավորումներին մասնակցության կասկածանքով: Այս կարգադրություններն այնուհետև կատարման համար փոխանցվել են Չեռնոկոզովո SIZO-ին:

69. 2000թ. ապրիլի 20-ին երկու դիմողների դեմ պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 126(2) և 208 (2) հոդվածների հիման վրա:

70. 2000թ. ապրիլի 25-ից պրն Տեփասևը՝ Նագրանի փաստաբանների միության անդամ, դիմողների դեմ քրեական գործի վարույթում նշանակվել է որպես դիմողների պաշտպան:

71. 2000թ. ապրիլի 26-ին դիմողները փոխադրվել են Չեռնոկոզովո SIZO և ենթարկվել բժշկական ստուգման՝ ինչպես պահանջվում է համապատասխան իրավական ակտերով: Առաջին դիմողի առնչությամբ փաստորոշվել է գլխի վնասվածք, և նա այդ կապակցությամբ համապատասխան բժշկական օգնություն է ստացել: Այլ վնասվածքներ դիմողների մոտ չի հայտնաբերվել: Երկրորդ դիմողը կալանքի տակ գտնվելու ժամանակ բուժում է ստացել քրոնիկ գաստրիտի կապակցությամբ:

72. 2000թ. հոկտեմբերի 4-ին դիմողներն ազատ են արձակվել՝ իրենց բնակության վայրից չհեռանալու պայմանով:

73. 2000թ. հոկտեմբերի 9-ին շրջանային դատախազը դիմողների դեմ քրեական գործի վարույթը կարճել է՝ մեղսագրվող հանցանքներում նրանց մասնակցությունը հավաստող ապացույցների բացակայության պատճառով:

74. 2000թ. նոյեմբերի 23-ին հանրապետական դատախազությունը վերացրել է 2000թ. հոկտեմբերի 9-ի որոշումը, և դիմողների դեմ քրեական գործի վարույթը վերսկսվել է:

75. 2001թ. հունվարի 20-ին շրջանային դատախազությունը կրկին կարճել է դիմողների դեմ քրեական գործի վարույթը՝ այն հիմքով, որ նրանց մասնակցությունը մեղսագրվող արարքներին չի ապացուցվել:

76. 2003թ. հոկտեմբերի 29-ին հանրապետական դատախազությունը վերացրել է 2001թ. հունվարի 20-ի որոշումը և գործն ուղարկվել է լրացուցիչ քննության: Քննությունը ներկայումս շարունակվում է և դրա շրջանակներում 2005թ. որոշ քննչական գործողություններ են ձեռնարկվել երկրորդ դիմողի նկատմամբ:

В. Կողմերի ներկայացրած փաստաթղթերը

1. Դիմողների ներկայացրած փաստաթղթերը

77. Մեծ քանակությամբ փաստաթղթերի թվում դիմողները ներկայացրել են իրենց տնից առգրավված իրերի ցուցակը՝ ստորագրված դիմողների մոր, երկու ընթերակայի և Աչկո-Մարտանի VOVD-ի ուստիկան Ս. Վլասենկոյի կողմից: Ցուցակը ներառում էր Sony մականիշի հեռուստացույց, Panasonic մականիշի հեռուստացույց, Toshiba մականիշի հեռուստացույց, Funai մականիշի տեսախցիկ, Panasonic մականիշի տեսախցիկ, Sony մականիշի տեսախցիկ, Lexmark մականիշի տպիչ, «Rus» ֆիլմ-լուսարձակ, հոսանքի կարգավորիչ, տաքացուցիչ՝ երկու փոփոխվող դետալներով, տեսա և ձայնամագնիսոֆոններ, երկու ճամպուրակ փաստաթղթեր և «Էլեկտրոնիկ» լիցքավորող սարքավորում:

78. Նրանք ներկայացրել են նաև ականատես վկաների՝ իրենց հոր, քրոջ և երեք հարևանների գրավոր հայտարարությունները, ովքեր հավաստում են Չիտանների գույքի առգրավման և 2000թ. ապրիլի 12-ին դիմողների ձերբակալման փաստերը:

2. Կառավարության ներկայացրած փաստաթղթերը

79. Դիմողների գանգատի հանգամանքները գնահատելու նպատակով գանգատի ընդունելիության փուլում Դատարանը Կառավարությունից պահանջել է ներկայացնել փաստաթղթեր դիմողների դեմ հարուցված քրեական գործից, ինչպես նաև փաստաթղթեր վատ վերաբերմունքի և կալանքի անօրինականության վերաբերյալ դիմողների գանգատների կապակցությամբ կազմակերպված քննությունից: Պահանջվել են նաև Չիտանների տան խուզարկությանը և այնտեղ կատարված առգրավմանն առնչվող փաստաթղթեր: Գանգատը մասամբ ընդունելի ճանաչելուց առաջ և հետո Կառավարության ներկայացրած փաստաթղթերը կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ:

(a) Խուզարկություններին և առգրավումներին վերաբերող փաստաթղթեր

80. 2000թ. հունվարի 15-ին Աչկո-Մարտանի VOVD-ի ուստիկանի կողմից կազմված անհասկանալի վերնագրով ձեռագիր փաստաթղթում արձանագրվել էր FT-26 ռադիոընդունիչի և օժանդակ սարքավորման, ռադիո ընդունիչի տեխնիկական փաստաթղթերի, զինվորական ժամացույցի, տրակտորների համարանիշերի և զինառայող Բ.-ի զինվորական գրքույկի առգրավումը: Դրանում նշվել էր, որ պատճենը տրվել է դիմողների հորը: Փաստաթուղթն ստորագրվել էր այն կազմած ուստիկանի և դիմողների հոր կողմից: 2001թ. հունվարի 15-ի զեկուցագրում նույն ուստիկանն իր վերադասին տեղեկացրել է Աչկո-Մարտանի Մատրոսովի փողոցի 28 տանը վերոհիշյալ իրերի առգրավման մասին և նշել է, որ դրանք հանձնել է դիմողների հայրը:

81. Կառավարությունը չի ներկայացրել որևէ փաստաթուղթ՝ կապված 2000թ. ապրիլի 12-ի խուզարկության հետ:

(b) Փաստաթղթեր՝ կապված դիմողների կալանքի հետ

82. 2000թ. ապրիլի 17-ի որոշմամբ Աչկո-Մարտանի դատախազության քննիչը Աչկո-Մարտան քաղաքում, Մատրոսովի փողոցի՝ Չիտաններին պատկանող 32 տանը (և ոչ 28) 2000թ. ապրիլի 12-ին ձեռնարկված «օպերատիվ-հետախուզական միջոցառումների» արդյունքների հիման վրա քրեական օրենսգրքի 126 (2) և 208 (2) հոդվածների համաձայն քրեական գործ է հարուցել դիմողների նկատմամբ:

83. 2000թ. ապրիլին (ճշգրիտ ամսաթիվն անընթեռնելի է) շրջանային դատախազության քննիչը կազմել է երկու արձանագրություն՝ նշելով, որ դիմողները ձերբակալվել են 2000թ. ապրիլի 17-ին՝ համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի: Արձանագրություններում նշվել է, որ դիմողների տանը հայտնաբերվել են քրեական հանցագործության հստակ հետքեր, որոնք հիմք են հանդիսացել դիմողների ձերբակալության համար, և նշվել է, որ դա անհրաժեշտ էր նրանց փախուստը կամ ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելը կանխելու համար: Արձանագրություններում նաև նշվել է, որ դիմողները ձերբակալվել են առևանգման և 1996-2000թթ. ապրիլի զինված խմբավորումներին մասնակցության կասկածանքով, որ նրանք տեղեկացվել են որպես կասկածյալ իրենց իրավունքների մասին և որ Աչկո-Մարտանի շրջանային դատախազը նույն օրն իսկ տեղեկացվել է դիմողների ձերբակալության մասին: Արձանագրություններն ստորագրվել են քննիչի և դիմողների կողմից:

84. 2000թ. ապրիլի 19-ի երկու որոշումներով շրջանային դատախազության քննիչը կարգադրել է դիմողների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանքը: Կարգադրություններում վկայա-

կոչվել են Չիտանների տնից 2000թ. ապրիլի 12-ին առգրավված իրերը և նշվել է, որ դիմողները կասկածվել են 1996-2000թթ. ռուս զինծառայողների առևանգման մեջ, և հանցագործության ծանրությամբ և ճշմարտության բացահայտմանը դիմողների խոչընդոտելու վտանգով պայմանավորված՝ դիմողները պետք է գտնվեն կալանքի տակ: Կարգադրություններում նաև նշվել է, որ դիմողները տեղեկացվել են նշանակված խափանման միջոցը դատական կարգով բողոքարկելու իրենց իրավունքի մասին: Դրանք ստորագրվել են քննիչի և դիմողների կողմից և հաստատվել շրջանային դատախազի ստորագրությամբ. այդ փաստաթղթերն ուղարկվել են Չեռնոկոզովո SIZO:

85. 2000թ. ապրիլի 20-ի երկու որոշումներով շրջանային դատախազության քննիչը պաշտոնապես մեղադրանք է առաջադրել դիմողներին՝ ռուս զինծառայողների առևանգման և 1996-2000թթ. ապրիլի զինված խմբավորումներին մասնակցության համար: Որոշումներում նշվել է, որ դիմողները տեղեկացվել են իրենց ներկայացված մեղադրանքների մասին, ինչպես նաև նրանց բացատրվել են մեղադրանքի էությունն ու իրենց դատավարական իրավունքները: Որոշումներն ստորագրվել են քննիչի և դիմողների կողմից, սակայն դիմողների պաշտպանի ստորագրությունը բացակայում էր:

86. Շրջանային դատախազի 2001թ. հունվարի 20-ի որոշմամբ դիմողների դեմ հարուցված քրեական գործը կարճվել է: Այս փաստաթղթում մանրամասն նկարագրվել են քրեական գործի վարույթի շրջանակներում ձեռնարկված գործողությունները: Դրանում նշել է, *inter alia*, որ դիմողները ձերբակալվել են 2000թ. ապրիլի 17-ին, որ 2000թ. ապրիլի 19-ին կարգադրվել է դիմողներին կալանքի վերցնել, որ 2000թ. ապրիլի 20-ին նրանց մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 126 (2) և 208 (2) հոդվածների հիման վրա, և որ 2000թ. օգոստոսի 7-ին դիմողների կալանքի ժամկետը երկարացվել է 5 ամիս 22 օրով՝ մինչև 2000թ. հոկտեմբերի 9-ը:

87. 2001թ. հոկտեմբերի 9-ի որոշումը վերացվել է հանրապետական դատախազության 2003թ. հոկտեմբերի 29-ի որոշմամբ. վերջինս կարգադրել է դիմողների դեմ հարուցված քրեական գործով վարույթի վերսկսում և լրացուցիչ նախաքննության իրականացում:

(ց) Փաստաթղթեր՝ վատ վերաբերմունքի և կալանքի պայմանների վերաբերյալ դիմողների պնդման կապակցությամբ

88. Կառավարությունը ներկայացրել է 2003թ. հոկտեմբերի 21-ին Չեռնոկոզովո SIZO-ի կողմից տրված բազմաթիվ տեղեկանքներ:

89. Տեղեկանքները փաստում էին, որ Չեռնոկոզովո SIZO ընդունվելու պահին դիմողների վրա որևէ վնասվածք չի հայտնաբերվել: Առաջին դիմողի մոտ հայտնաբերվել է գլխի վնասվածք և կալանքի տակ գտնվելու ընթացքում նա այս կապակցությամբ յոթ անգամ ստացել է բժշկական օգնություն և բուժում է նշանակվել. երկրորդ դիմողը բժշկական օգնություն է ստացել հինգ անգամ՝ կապված հարբուխի և քրոնիկ գաստրիտի հետ, և նրա համար ևս բուժում է նշանակվել:

90. Մեկ այլ փաստաթղթում թվարկվում էին այն խցերը, որոնցում դիմողները պահվել են: Փաստաթղթում նշվել է, որ առաջին դիմողը պահվել է հետևյալ խցերում՝ թիվ 10մ (18քմ), թիվ 2 (14քմ), թիվ 23 (18.8քմ), թիվ 3 (12.8քմ) և թիվ 10 (18քմ), իսկ երկրորդ դիմողը պահվել է խցեր թիվ 5 (13.2քմ), թիվ 20 (12.2քմ), թիվ 3 և թիվ 27 (7քմ) խցերում: Փաստաթղթում նշվել է նաև, որ բոլոր խցերի պայմանները համապատասխանել են սանիտարական պահանջներին, որ բոլոր խցերն ապահովված են եղել ջրով և զուգարանով: Փաստաթղթում նշվել է նաև, որ դիմողները մշտապես ունեցել են իրենց մահճակալը:

91. Մյուս տեղեկանքները փաստում էին, որ ապրիլի 26-ից մինչև սեպտեմբերի 25-ը դիմողների նկատմամբ ուժ կամ հատուկ միջոցներ չեն կիրառվել, որ դիմողներն այդ ժամանակահատվածում չեն ուղարկվել որևէ նամակ կամ գանգատ, որ Չեռնոկոզովո SIZO-ի վարչակազմը նրանց տրամադրել է համապատասխան իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն, որ ապահովվել է իրավական փաստաթղթերի մատչելիությունը և որ 2000թ. հունիսի 2-ին նրանց է այցելել պաշտպան պրն Տեփսակը:

92. Ռուսաստանի տարբեր բարձր ատյանների դատարանների մի քանի նամակներում նշվել է, որ 1999-2003թթ. դիմողների դեմ որևէ քրեական գործ չի քննվել Ռուսաստանի համապատասխան տարածաշրջանների դատարաններում, և որ դիմողները չեն վիճարկել անօրինական կալանքը կամ Ալկո-Մարտանի VOVD-ի կամ Չեռնոկոզովո SIZO-ի անձնակազմի գործողությունները:

93. Ալկո-Մարտանի շրջանային դատախազության կողմից 2001թ. դեկտեմբերի 29-ին տրված ձեռագիր բացատրության մեջ երկրորդ դիմողը նշել է, որ իրեն և առաջին դիմողին կալանավորել են առևանգման և ապրիլի զինված խմբավորումներին մասնակցության կասկածանքով իրենց դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում, և որ այնուհետև իրենք ազատ են արձակվել բնակության վայրից չբացակայելու պայմանով, և որ իրենց դեմ հարուցված քրեական գործը հետագայում կարճվել է: Երկրորդ դիմողը նաև նշել է, որ կալանքի համար հիմքեր եղել են, քանի որ իրենց տանը հայտնա-

բերվել են զինվորական վերարկուներ, և որ կալանքի ընթացքում իրենց դատավարական և այլ իրավունքներ չեն խախտվել: Նա նաև նշել է, որ ինքը երբևէ չի ստորագրել ոչ ճշմարիտ հայտարարություն և չունի որևէ զանգատ ընդդեմ Աչկո-Մարտանի VOVD-ի կամ Չեռնոկոզովո SIZO-ի աշխատակիցների կամ շրջանային դատախազության քննիչների:

94. 2002թ. հունվարի 7-ին Աչկո-Մարտանի շրջանային դատախազության քննիչը, հիմնվելով դիմողների անունից SRJI-ի ներկայացրած բողոքի քննության արդյունքների վրա, որոշել է մերժել քրեական գործի հարուցումը: Որոշման մեջ նշվել է, որ Աչկո-Մարտանի շրջանային դատախազությունը 2000թ. ապրիլի 17-ին հարուցել է թիվ 59212 գործն ընդդեմ դիմողների՝ քրեական օրենսգրքի 126 (2) և 208(2) հոդվածներով նախատեսված քրեական հանցանքներ կատարելու կասկածանքով: Որոշման մեջ նաև նշվել է.

«Քրեական գործը հարուցվել է 2000թ. ապրիլի 12-ին ձեռնարկված օպերատիվ միջոցառումների ընթացքում՝ Ռուսաստանի զինված ուժերի զինծառայողների ուժ զինվորական վերարկուներ, ...զինծառայող Բ.-ի անձնական զինվորական գրքույկը, փաստաթղթեր և առևանգումների ու ապօրինի զինված խմբավորումներին դիմողների մասնակցության վերաբերյալ տեղեկատվությամբ ծայնագրությունները հայտնաբերելու արդյունքում:

2000թ. ապրիլի 12-ին Աչկո-Մարտանի VOVD-ի ոստիկան Ս. Մ. Վլասենկոն իրականացրել է դեպի վայրի զննում..., որն արտահայտված է արձանագրության մեջ: Ձևնուն իրականացվել է երկու ընթերակայի, տանտիրոջ և VOVD-ի երկու ոստիկանների ներկայությամբ»:

Որոշման մեջ նաև նշվել է, որ դիմողները ձերբակալվել են քրեական դատավարության օրենսգրքի 122 հոդվածի համաձայն՝ 2000թ. ապրիլի 17-ին, որ 2000թ. ապրիլի 19-ին կարգադրվել է նրանց կալանքը, և որ 2000թ. ապրիլի 20-ին նրանց պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել վերոհիշյալ հանցագործությունների կապակցությամբ և նրանց բացատրվել են իրենց դատավարական իրավունքները: Որոշման մեջ նշվել է, որ դիմողները հրաժարվել են պաշտպան ունենալու իրենց իրավունքից, բայց այնուամենայնիվ, նրանց տրամադրվել է պաշտպան՝ պրն Տեփսաևը: Որոշման մեջ նաև նշվել է, որ 2000թ. հոկտեմբերի 4-ին դիմողներն ազատ են արձակվել՝ բնակության վայրից չհեռանալու պայմանով, և որ 2000թ. փետրվարին քրեական գործի վարույթը կարճվել է մեղսագրված արարքներին դիմողների մասնակցությունը հավաստող ապացույցների բացակայության պատճառով: Որոշման մեջ նաև նշվել է.

«Տվյալ գործով նախաքննության ընթացքում որևէ խուզարկություն չի կատարվել:

Նախաքննության ընթացքում դատավարական որևէ խախտում տեղի չի ունեցել, ինչը հավաստվում է թիվ 59121 քրեական գործի նյութերով:

Դիմողները չեն ստորագրել որևէ խոստովանություն..., այս փաստը հավաստվում է թիվ 59121 գործում նման փաստաթղթերի բացակայությամբ և երկրորդ դիմողի բացատրություններով:

...

Չեռաքննության և Աչկո-Մարտանի VOVD-ում և Չեռնոկոզովո SIZO-ում կալանքի ընթացքում դիմողների առնչությամբ որևէ դատավարական կամ այլ իրավունքի խախտում տեղի չի ունեցել, ինչը հավաստվում է թիվ 59121 գործի նյութերով և երկրորդ դիմողի բացատրություններով:

Վերոհիշյալից ելնելով՝ Ռուսաստանի քրեական օրենսգրքով արգելված որևէ հանցանքի ապացույց չի կարող հայտնաբերվել թիվ 59121 գործի համար պատասխանատու շրջանային դատախազության քննիչների կամ Աչկո-Մարտանի VOVD-ի կամ Չեռնոկոզովո SIZO-ի ոստիկանների գործողություններում»:

Այդպիսով որոշմամբ եզրահանգում է կատարվել, որ դիմողների զանգատների առնչությամբ քրեական գործ հարուցելու վերաբերյալ SRJI-ի պահանջը պետք է մերժվի, միաժամանակ նշվել է, որ չահագրգիռ անձինք պետք է տեղեկացվեն այդ որոշման և այն Աչկո-Մարտանի շրջանային դատախազություն կամ դատարան բողոքարկելու իրենց իրավունքի մասին: Որոշման մեջ որևէ մեկնաբանություն չի ներկայացվել SRJI-ի մատնանշած՝ դիմողների վնասվածքները հավաստող բժշկական փաստաթղթերի վերաբերյալ:

95. 2002թ. մայիսի 2-ին Չեչնիայի Հանրապետության դատախազության դատախազը կազմել է զեկույց՝ «Աչկո-Մարտանի VOVD-ում և Չեռնոկոզովո SIZO-ում 2000թ. ապրիլի 12-ից մինչև հոկտեմբերի 5-ը վատ վերաբերմունքի մասին դիմողների զանգատների քննության ընթացքում Աչկո-Մարտանի շրջանային դատախազության աշխատակիցների գործողությունների առնչությամբ ծառայողական ստուգման արդյունքների մասին»: Ձեկույցում նշվել է, որ ծառայողական ստուգումն իրականացվել է վատ վերաբերմունքի ենթարկված լինելու պնդումների կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ շրջանային դատախազի 2002թ. հունվարի 7-ի որոշման դեմ դիմողների անունից SRJI-ի կողմից ներկայացված բողոքի կապակցությամբ: Ձեկույցում նշվել է, որ ծառայողական ստուգման արդյունքներով հաստատվել է հետևյալը.

«2002թ. հունվարին երկրորդ դիմողը և նրա հայրը հրավիրվել են Աշկո-Մարտանի շրջանային դատախազություն՝ դիմողների նկատմամբ քննության անօրինական մեթոդներ կիրառելու մասին տեղեկատվության կապակցությամբ: Երկրորդ դիմողն անձամբ չի բողոքել, որ իր նկատմամբ որևէ հայտարարություն կորզելու նպատակով ճնշում է գործադրվել: Ուստի նա կամավոր բացատրություն է տվել քննիչ Չ.-ին առ այն, որ իր նկատմամբ քննության ապօրինի մեթոդներ չեն կիրառվել և նա իրավապահ մարմինների դեմ որևէ գանգատ չունի:

Ոչ քննիչը, ոչ դատախազը նրա վրա ճնշում չեն գործադրել այդ բացատրությունը կորզելու նպատակով: Որևէ ահաբեկում այս կապակցությամբ չի եղել... Ավելին, քննիչ Չ.-ին բացատրություն տալուց հետո նա խոսել է դատախազ Ա. Կ.-ի հետ:

Դիմողի հայրը հրաժարվել է որևէ բացատրություն տալուց: Ներկայումս նա բուժում է ստանում հանրապետությունից դուրս: Նա հրաժարվել է բացատրություն տալուց, քանի որ հագեցել էր այդ ամենից:

Երկրորդ դիմողը չգիտեր, թե արդյոք առաջին դիմողը դիմել է մարդու իրավունքների որևէ կազմակերպության: Ներկայումս առաջին դիմողն ապրում է Լեհաստանում, և երկրորդ դիմողը նրա հետ չփուն չունի:

Ըստ երևույթին իր կրտսեր եղբայրն է... Մոսկվայում հանդիպել SRJI-ի ներկայացուցչին և ներկայացրել խնդրի առարկա տեղեկությունները: Դրանից հետո ինքը խոսել է կրտսեր եղբոր հետ և արգելել նրան այլևս դիմել մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների՝ չճշտված տեղեկություններով:

Ծառայողական ստուգման ժամանակ հարցաքննված՝ Աշկո-Մարտանի շրջանային դատախազության քննիչը նշել է, որ հունվարին ինքն իրականացրել է քննություն՝ կապված SRJI-ի այն պնդումների հետ, որ Աշկո-Մարտանի VOVD-ում և Չեռնոկոզովո SIZO-ում կալանքի ընթացքում դիմողների նկատմամբ կիրառվել են քննության ապօրինի մեթոդներ: Այդ քննության ընթացքում ինքը հարցաքննել է երկրորդ դիմողին, որի վրա որևէ հոգեբանական կամ ֆիզիկական ճնշում չի գործադրվել... Ինքը չի հարկադրել երկրորդ դիմողին տալ որևէ հայտարարություն, այլ պարզապես հարցաքննել է նրան, որից հետո վերջինս կարդացել և ստորագրել է բացատրությունը: Դիմողի հայրը երկրորդ դիմողի հետ մեկտեղ ներկայացել է շրջանային դատախազություն, տվել է բանավոր բացատրություններ, որից հետո այլևս չի արձագանքել ծանուցումներին: Այդ քննության արդյունքում մերժվել է քրեական գործի հարուցումն ընդդեմ այն ոստիկանների, որոնք ենթադրաբար քննության ապօրինի մեթոդներ էին կիրառել դիմողների նկատմամբ՝ վերջիններիս կալանքի ընթացքում (նրանց գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ):

Աշկո-Մարտանի շրջանային դատախազ Ա. Կ.-ն, որը հարցքննվել էր ծառայողական ստուգման ընթացքում, նշել է, որ շրջանային դատախազությունը քննություն է իրականացրել դիմողների այն պնդման առնչությամբ, որ իրենց նկատմամբ 2000թ. հունվարին կիրառվել են քննության ապօրինի միջոցներ. արդյունքում քննիչ Չ.-ն որոշել է քրեական գործ չհարուցել (հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ): Դատախազության աշխատակիցները երկրորդ դիմողի և նրա հոր նկատմամբ որևէ ճնշում չեն գործադրել: Քննիչին բացատրություն տալուց հետո երկրորդ դիմողը դատախազի հետ հանդիպում է խնդրել: Երկրորդ դիմողը հանրապետական դատախազության վերադաս պաշտոնյայի պահանջով հաստատել է SRJI-ի մամակում նշված մեղադրանքների զրպարտչական բնույթը: Հանրապետական դատախազը հաստատել է շրջանային դատախազի որոշումը»:

Ձեկույցում եզրահանգվել է, որ Աշկո-Մարտանի VOVD-ում և Չեռնոկոզովո SIZO-ում 2000թ. ապրիլի 12-ից մինչև հոկտեմբերի 5-ը դիմողների նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի կապակցությամբ քրեական գործ չհարուցելու մասին քննիչ Չ.-ի 2002թ. հունվարի 2-ի որոշումը օրինական է և հիմնավոր, որ SRJI-ի բողոքի կապակցությամբ քննության ընթացքում երկրորդ դիմողի և նրա հոր նկատմամբ ճնշման կապակցությամբ SRJI-ի պնդումներն անհիմն են, և որ 2002թ. հունվարի 2-ի որոշումը վերացնելու վերաբերյալ SRJI-ի պահանջը պետք է մերժվի:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

96. Չեռնոկոզովո SIZO-ն, որտեղ դիմողները գտնվել են կալանքի տակ, մարդու իրավունքների տարբեր կազմակերպությունների, ներառյալ՝ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) ուշադրության կենտրոնում էր՝ կալանավորների նկատմամբ վատ վերաբերմունքի պատճառով: 2000թ. մարտի 4-ին CPT-ի պատվիրակության ղեկավարը՝ պրն Յեյկը, Ռուսաստանի Դաշնության Հյուսիսային Կովկասի տարածաշրջան CPT-ի այցի ավարտից անմիջապես հետո հրապարակել է ռուսաստանյան պաշտոնատար անձանց հայտարարությունը: Հայտարարության մեջ, *inter alia*, Չեռնոկոզովո այցի կապակցությամբ նշվել է.

Պատվիրակությանը գոհացում է այն, որ այս հաստատությունում կալանավորված անձինք ֆիզիկապես չեն ենթարկվում վատ վերաբերմունքի: Չնայած SIZO-ում կալանքի պայմանները հեռու են ցանկալից, սակայն վերջին ժամանակներս գործադրվում և շարունակում են գործադրվել լուրջ ջանքեր այդ պայմանները բարելավելու ողողությամբ:

Այնուամենայնիվ, պատվիրակության կողմից հավաքված տեղեկատվությունը լրջորեն վկայում է այն մասին, որ Չեռնոկոզովոյում կալանքի տակ գտնվող շատ անձինք 1999թ.-ից մինչև 2000թ. փետրվարի սկզբներն ընկած ժամանակահատվածում ֆիզիկապես ենթարկվել են վատ վերաբերմունքի: Տարբեր վայրերում պատվիրակությունն անհատական և գաղտնի հարցազրույցներ է վարել այդ ժամանակահատվածում Չեռնոկոզովոյում կալանքի տակ գտնված անձանց հետ: Բանտարկյալների նկատմամբ անձնակազմի կողմից կիրառվող ֆիզիկական վատ վերաբերմունքի հստակ համակարգ է գործել: Վատ վերաբերմունքը դրսևորվում էր մարմնի տարբեր հատվածների (բացառությամբ գլխի) ոտքով, բռնցքով և ոստիկանական փայտով հարվածների ձևով: Վատ վերաբերմունքը հիմնականում դրսևորվում էր կալանավայրի կենտրոնական միջանցքում, երբ սովորաբար կալանավորները տարվում էին քննիչի մոտ հարցաքննության կամ այնտեղից վերադառնում էին իրենց խցերը: Ըստ երևույթին բանտարկյալները ֆիզիկական վատ վերաբերմունքի էին ենթարկվում նաև քննիչների սենյակներում: Քննիչները լիովին տեղյակ էին նման վատ վերաբերմունքի կիրառմանը, և որոշ բանտարկյալներ հաստատում էին նույնիսկ, որ այդ վերաբերմունքը հրահրվում էր քննիչների կողմից: Որոշ դեպքերում պատվիրակությունը հավաքել է բժշկական ապացույցներ, որոնք համապատասխանել են վատ վերաբերմունքի վերաբերյալ բանտարկյալների պնդումներին:

Չարկ է նշել, որ 2000թ. հունվարից մինչև փետրվար Չեռնոկոզովոյում պահվող բոլոր բանտարկյալները հարցազրույցներում շեշտել են, որ զգալի փոփոխություն է տեղի ունեցել փետրվարի սկզբին: Ույն այդ ժամանակ տեղի է ունեցել կալանավայրի անձնակազմի փոփոխություն: Ծեծերը դադարեցվել են, տեղի են ունեցել նաև այլ բարելավումներ. մասնավորապես, բարելավվել է սնունդը: Ավելին, վատ վերաբերմունքի վերաբերյալ որևէ գանգատ չի եղել բոլոր այն հարցաքննված բանտարկյալների կողմից, ովքեր այդ հաստատություն են բերվել 2000թ. փետրվարի առաջին շաբաթից հետո:

97. 2001թ. հուլիսի 10-ին CPT-ն խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա հրապարակել է հայտարարություն: Այս քայլի պատճառ է հանդիսացել ռուսաստանյան իշխանությունների կողմից համագործակցության բացակայությունը երկու հարցերում. (i) իրականացնել մանրակրկիտ անկախ ստուգում 2000թ. հունվարից փետրվարն ընկած ժամանակահատվածում Չեռնոկոզովոյի կալանավայրում կատարված դեպքերի առնչությամբ, (ii) ձեռնարկել գործողություններ առկա հակամարտության ընթացքում Չեչնիայի Չանրապետությունում ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը բացահայտելու և հետապնդելու ուղղությամբ: Հայտարարության մեջ մասնավորապես ասվել է.

...CPT-ի պատվիրակության կողմից 2000թ. փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին կատարված այցերի ընթացքում հավաքված տեղեկատվությունը վկայում է, որ հակամարտության հենց սկզբից Չեչնիայի Չանրապետությունում ազատությունից զրկված մեծաթիվ անձինք ֆիզիկապես ենթարկվել են վատ վերաբերմունքի ռուսաստանյան զինված ուժերի և իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից: Իր երկու այցերի վերաբերյալ զեկույցներում CPT-ն առաջարկել է ռուսաստանյան իշխանություններին կրկնապատկել իրենց ջանքերը՝ հակամարտության ընթացքում Չեչնիայի Չանրապետությունում ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը բացահայտելու և հետապնդելու ուղղությամբ: Կոմիտեն կատարել է գործնական բնույթի մի շարք դիտողություններ՝ միտված գործադրվելիք ջանքերի հստակեցմանը: Ավելի ընդհանուր, CPT-ն ընդգծել է, որ ռուսաստանյան իշխանությունները պետք է այս հարցում որդեգրեն գործնական մոտեցում:

Ռուսաստանյան իշխանությունների արձագանքն այս առանցքային հանձնարարականին՝ խիստ անբավարար էր...

Ինչպես նշվել է ռուսաստանյան իշխանություններին 2001թ. մայիսի 10-ին հղված նամակում, Կոմիտեի անհանգստությունն ավելի է մեծանում՝ հաշվի առնելով այն փաստը, որ Չեչնիայի Չանրապետություն Կոմիտեի վերջին այցի ընթացքում, 2001թ. մարտին, բազմաթիվ վստահելի և արժանահավատ հայտարարություններ են ստացվել Դաշնային ուժերի կողմից դաժան վերաբերմունքի մասին: Մի շարք դեպքերում նման հայտարարությունները հաստատվել են բժշկական ապացույցներով: CPT-ի պատվիրակությունը գտավ, որ առկա է հստակ վախի մթնոլորտ. վատ վերաբերմունքի ենթարկված շատերը և նման հանցագործության մասին տեղյակ անձինք ձեռնպահ էին մնում իշխանություններին այդ կապակցությամբ զանգատ ներկայացնելուց: Առկա էր տեղական մակարդակում ճնշումների ենթարկվելու վախ, ինչպես նաև այնպիսի համոզմունք, որ, միևնույն է, արդարություն չի լինի: Ընդգծվում էր, որ ռուսաստանյան իշխանությունները պետք է ջանք չխնայեն այս խստորեն անհանգստացնող իրավիճակը շտկելու համար:

98. 2003թ. հուլիսի 10-ին CPT-ն հրապարակեց երկրորդ հայտարարությունը Չեչնիայի վերաբերյալ: Դրա համար առիթ են հանդիսացել շարունակվող հայտարարություններն իրավապահ մարմինների և Չեչնիայի Չանրապետությունում գործող դաշնային ուժերի ներկայացուցիչների կողմից դրսևորվող խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի մասին: Նշվել է նաև, որ պատասխանատու

անձանց նկատմամբ արդարադատություն իրականացնելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցները դանդաղում են և արդյունավետ չեն: Հայտարարությունում, մասնավորապես, նշվել է.

2002թ. և բոլորովին վերջերս՝ 2003թ. մայիսի 23-29-ը Չեչնիայի Հանրապետություն CPT-ի այցերի ընթացքում տարբեր տեղերում անկախ հարցազրույցների մասնակցած մեծաթիվ անձինք պնդել են, որ իրավապահ հաստատություններում կալանքի տակ գտնվելու ընթացքում ենթարկվել են դաժան վերաբերմունքի: Նման պնդումները մանրամասն էին և հավաստի և վերաբերում էին այնպիսի մեթոդների, ինչպիսիք են դաժան ծեծը, էլեկտրաշոկի կիրառումը, պլաստիկ պարկի կամ գազի դիմակի միջոցով շնչափնդծ անելը: Շատ դեպքերում նման պնդումներն ուղեկցվում էին բժշկական ապացույցներով: Որոշ անձինք հետազոտվել են պատվիրակության բժիշկների կողմից և նրանց վրա հայտնաբերվել են իրենց պնդումներին համապատասխանող նշաններ: Հավաքվել են նաև իրավապահ հաստատություններում կալանքի ընթացքում վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումները հավաստող բժշկական ապացույցներ ներառող փաստաթղթեր:

B. Ներպետական իրավունք

1. 1960թ. քրեական դատավարության օրենսգիրքը, որն ուժի մեջ էր մինչև 2002թ. հուլիսը

(a) Քրեական գործ հարուցելու վերաբերյալ դրույթները

99. Հոդված 108-ը նախատեսում է, որ քրեական գործ կարող է հարուցվել քաղաքացիների, պետական կամ մասնավոր մարմինների նամակների և բողոքների, մամուլի հրապարակումների հիման վրա կամ քննչական մարմնի, դատախազի կամ դատարանի կողմից՝ հանցագործության կատարման վերաբերյալ ապացույցների հայտնաբերման փաստի հիման վրա:

100. Հոդված 109-ը նախատեսում է, որ հետաքննության մարմինը հանցագործության մասին տեղեկանալուց հետո առավելագույնը տասն օրվա ընթացքում ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը. հարուցել քրեական գործ կամ մերժել քրեական գործի հարուցումը կամ տեղեկությունը փոխանցել համապատասխան մարմնին: Տեղեկությունը տրամադրած անձը պետք է ծանուցվի ցանկացած որոշման մասին:

101. Հոդված 113-ի համաձայն՝ եթե հետաքննության մարմինը մերժում է քրեական գործի հարուցումը, պետք է կայացվի պատճառաբանված որոշում: Տեղեկություն տրամադրած անձը պետք է ծանուցվի այդ որոշման մասին և իրավունք ունի այդ որոշումը բողոքարկելու վերադաս դատախազին կամ դատարան:

(b) Զերբակալությանն ու կալանքին վերաբերող դրույթներ

102. Հոդված 11 (1)-ը երաշխավորում է անձնական անձեռնմխելիության սկզբունքը և սահմանում է, որ անձը կարող է ձերբակալվել միայն դատական որոշման կամ դատախազի կարգադրության հիման վրա:

103. Հոդված 122-ի համաձայն՝ հետաքննության մարմինը կարող է ձերբակալել ազատագրված պատժվող հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձին հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայությամբ.

- (i) եթե անձը բռնվել է հանցագործություն կատարելու պահին կամ դրանից անմիջապես հետո,
- (ii) եթե ակամատես վկաները, ներառյալ՝ տուժողները, մատնացույց են անում տվյալ անձին՝ որպես հանցագործությունը կատարած անձ,
- (iii) եթե հանցագործության հստակ հետքեր են հայտնաբերվում տվյալ անձի մարմնի կամ զգեստների վրա կամ նրա մոտ կամ նրա կացարանում:

Հետաքննության մարմինը հանցագործության կատարման մեջ կասկածվող ցանկացած անձի ձերբակալման կապակցությամբ կազմում է արձանագրություն՝ նշելով ձերբակալման հիմքերը, շարժառիթները, օրը և ժամանակը, տարին և ամիսը, ձերբակալվողի բացատրությունները և արձանագրությունը կազմելու ժամանակը. արձանագրության մասին 24 ժամվա ընթացքում գրավոր ծանուցվում է դատախազին: Զերբակալման մասին ծանուցվելուց հետո 48 ժամվա ընթացքում դատախազը կամ պետք է կարգադրի տվյալ անձի կալանքը կամ պետք է ազատ արձակի այդ անձին:

104. Հոդված 89 (1)-ը թույլատրում է խափանման միջոցների կիրառում, եթե առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է խուսափել քննությունից, նախնական քննությունից կամ դատաքննությունից, կամ խոչընդոտել քրեական գործով ճշմարտության բացահայտմանը կամ

կատարել այլ քրեական օրենքով արգելված արարք, ինչպես նաև դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Քննիչը, դատախազը կամ դատարանը կարող են կիրառել հետևյալ խափանման միջոցներից որևէ մեկը. գրավոր պարտավորություն՝ կոնկրետ վայրից չհեռանալու վերաբերյալ, անձնական կամ պետական կազմակերպության երաշխավորություն կամ կալանք:

105. Հոդված 90-ը բացառիկ դեպքերում թույլատրում է խափանման միջոց կիրառել այն կասկածյալի նկատմամբ ում մեղադրանք չի առաջադրվել: Նման դեպքերում կասկածյալին մեղադրանք պետք է առաջադրվի խափանման միջոցի կիրառումից հետո տասն օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում մեղադրանք չի առաջադրվում, ապա խափանման միջոցը պետք է վերացվի:

106. Հոդված 91-ը պահանջում է խափանման միջոց ընտրելիս հաշվի առնել հետևյալ հանգամանքները. մեղադրանքի ծանրությունը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, զբաղմունքը, տարիքը, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը և այլ հանգամանքներ:

107. Հոդված 92-ը լիազորում է քննիչին, դատախազին կամ դատավորին ընդունել որոշում կամ եզրակացություն խափանման միջոցի վերաբերյալ՝ նշելով հանցագործությունը, որի կատարման մեջ տվյալ անձը կասկածվում կամ մեղադրվում է, և նման միջոցի կիրառման հիմքերը: Շահագրգիռ անձը պետք է տեղեկացվի այդ որոշման կամ եզրակացության մասին, և միաժամանակ նրան պետք է տրամադրվի տեղեկատվություն բողոքարկման ընթացակարգի մասին: Որոշման կամ եզրակացության պատճենն անմիջապես պետք է տրամադրվի այն անձին, ում նկատմամբ խափանման միջոցը կիրառվել է:

108. Հոդված 96-ը սահմանում է ձերբակալության հիմքերը և լիազորում է դատախազներին՝ շրջանային կամ քաղաքային դատախազի մակարդակից մինչև Գլխավոր դատախազ, թույլատրել կալանք:

109. Հոդված 97-ը նախատեսում է, որ կալանքը նախաքննության ընթացքում չի կարող գերազանցել երկամսյա ժամկետը: Այդ ժամկետը կարող է երկարացվել դատախազի կողմից՝ մինչև երեք ամիս, և հետագա կալանքը կարող է թույլատրվել տարածքային դատախազի (նույն դասի դատախազի) կողմից՝ առավելագույնը մինչև վեց ամիս: Վեցամսյա ժամկետից ավելի կալանքի ժամկետի երկարացումը կարող է թույլատրվել բացառիկ դեպքերում՝ միայն ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց առնչությամբ և կարող է թույլատրվել Գլխավոր դատախազի տեղակալի կողմից՝ մինչև մեկ տարի, և Գլխավոր դատախազի կողմից՝ մինչև մեկուկես տարի: Կալանքի ժամկետի հետագա երկարացում չի թույլատրվում, և անձը պետք է այնուհետև ազատ արձակվի:

110. Կալանքի ժամկետը երկարացնելու կարգադրությունը կարող է բողոքարկվել կալանավայրի գտնվելու վայրի դատարան (հոդվածներ 220-1 և 220-2):

(c) Դրույթներ անօրինական կալանքի համար փոխհատուցման վերաբերյալ

111. Հոդված 58-1-ը սահմանում է, որ եթե քրեական գործը կարճվում է հանցագործության, հանցակազմի կամ հանցագործության կատարման մեջ տվյալ անձի մասնակցության ապացույցի բացակայության հիմքով, իրավասու պետական պաշտոնյաները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, *inter alia*, տվյալ անձին անօրինական կալանքի արդյունքում պատճառված վնասը հատուցելու համար:

(d) Խուզարկությանն ու առգրավմանը վերաբերող դրույթներ

112. Հոդված 87-ը սահմանում է, որ բոլոր քննչական միջոցառումները, ներառյալ՝ զննումը, խուզարկությունը և առգրավումը պետք է պաշտոնապես ձևակերպվեն արձանագրությամբ:

113. Գլուխ 14-ը կանոնակարգում է խուզարկությանը և գույքի առգրավմանը վերաբերող հարցերը: Հոդված 168-ը սահմանում է, որ խուզարկությունը պետք է կատարվի քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա և դատախազի թույլտվությամբ: Խուզարկությունն առանց դատախազի թույլտվության կարող է կատարվել հապաղում չթույլատրող պատճառով, սակայն դատախազը նման խուզարկության մասին պետք է ծանուցվի 24 ժամվա ընթացքում: Հոդված 171-ն առգրավվող իրերը և փաստաթղթերը սահմանափակում է այն իրերով և փաստաթղթերով, որոնք վերաբերում են քրեական վարույթին:

114. Գլուխ 15-ը վերաբերում է տեղանքի զննություններին: Հոդված 178-ը մինչև քրեական գործի հարուցումը դեպքի վայրի զննություն թույլատրում է հապաղում չթույլատրող պատճառով: Նման դեպքում քննությունն անմիջապես պետք է սկսվի զննությունից հետո: Հոդված 182-ը պահանջում է զննու-

յան կապակցությամբ արձանագրության կազմում: Արձանագրությունում պետք է նկարագրվեն քննիչի գործողությունները և զննության ընթացքում առգրավված բոլոր իրերը:

2. Քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները խախտող գործողությունները և որոշումները դատարան բողոքարկելու մասին օրենքը (փոփոխված 1995թ. դեկտեմբերի 14-ի Դաշնային օրենքով)

115. Այս օրենքը սահմանում է յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը՝ դիմելու դատարան, եթե գտնում է, որ իրավունքները կամ ազատությունները խախտվել են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հաստատությունների, ձեռնարկությունների կամ դրանց միավորումների, հասարակական կազմակերպությունների կամ պաշտոնյաների և պետական ծառայողների կողմից:

116. Բողոքը կարող է ներկայացվել կամ անմիջականորեն դատարան կամ վերադաս պետական մարմին, որը պարտավոր է բողոքը քննության առնել մեկամսյա ժամկետում: Եթե վերջինս մերժում է բողոքը կամ չի պատասխանում դրան, տվյալ անձն իրավունք ունի դիմելու դատարան:

ԻՐԱՎՈՆՔԻ ՀԱՐՑԵՐ

1. ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՑԱՄՍՅԱ ԿԱՆՈՆԻՆ

117. Առաջին հերթին Դատարանը կրկնում է, որ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի՝ ինքը կարող է հարցը քննության առարկա դարձնել, եթե պաշտպանության միջոցներն սպառելու գործընթացում վերջնական որոշումից հետո չի անցել վեց ամիս: Եթե պաշտպանության միջոցներ առկա չեն կամ դրանք համարվում են ոչ արդյունավետ (տե՛ս Հազարը և այլոք ընդդեմ Թուրքիայի, թիվ 62566/00, 2002թ. հունվարի 10): Հատուկ մոտեցում կարող է ցուցաբերվել բացառիկ դեպքերում, երբ դիմողն սկզբում փորձել է օգտվել առկա պաշտպանության միջոցից և միայն ավելի ուշ է տեղյակ դարձել կամ կարող էր տեղյակ դառնալ այն հանգամանքներին, որոնք պաշտպանության նման միջոցը դարձնում են ոչ արդյունավետ: Նման դեպքերում վեցամսյա ժամկետը հաշվվում է այն պահից, երբ դիմողը տեղյակ է դարձել կամ կարող էր տեղյակ դառնալ այդ հանգամանքներին (տե՛ս Բուլատը և Յավուզը ընդդեմ Թուրքիայի, թիվ 73065/01, 2002թ. մայիսի 28):

118. Դատարանը նաև նկատում է, որ պատասխանող Կառավարության կողմից վեցամսյա կանոնի հիման վրա նախնական առարկություն չներկայացնելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ Դատարանի համար՝ չանդրադառնալու վեցամսյա կանոնի կիրառման հարցին, քանզի այդ չափանիշը, հաշվի առնելով, որ այն նպատակ ունի կանխելու պետության պատասխանատվությունն անցյալում տեղի ունեցած իրադարձությունների համար, որոնցից անորոշ ժամանակ է անցել, ծառայում է ոչ միայն պատասխանող Կառավարությունների, այլ նաև իրավական որոշակիության՝ որպես արժեքի, չափերին: Այն ուրվագծում է կոնվենցիոն մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ժամկետային սահմանափակումները և Կառավարություններին և անհատներին ազդարարում է, որ այդ ժամկետից դուրս վերահսկողությունն այլևս անհնարին է դառնում (տե՛ս Վոքերն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 34979/97, ECHR 2000-I):

119. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը նկատում է, որ 2000թ. հուլիսի 19-ի իրենց սկզբնական գանգատը դիմողները ներկայացրել էին Կոնվենցիայի 5, 8 և 13-րդ հոդվածների, 1-ին արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա, մինչդեռ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ գանգատ չի ներկայացվել մինչև 2002թ. նոյեմբերի 6-ը, երբ դիմողները ներկայացրել են լրացուցիչ գանգատ: Դատարանը նաև նշում է, որ այս վերջին գանգատները վերաբերում են 2000թ. ապրիլի 12-ից մինչև հոկտեմբերի 5-ը դիմողների նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքին և կալանքի պայմաններին, ուստիև ծագում է դիմողների կողմից վեցամսյա կանոնի պահպանման հարցը:

120. Դիմողների նկատմամբ վատ վերաբերմունքի առնչությամբ Դատարանը նկատում է, որ նրանք առաջին գանգատը ներպետական մարմիններին ներկայացրել են 2001թ. հոկտեմբերի 5-ին և իշխանությունների վերջին արձագանքն այդ գանգատներին՝ վերաբերում է 2002թ. մայիսի 6-ին: Ուստի Դատարանը գտնում է, որ իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ գանգատի առնչությամբ դիմողները պահպանել են վեցամսյա կանոնը:

121. Ինչ վերաբերում է կալանքի պայմաններին, ապա Դատարանը նկատում է, որ իր տրամադրության տակ եղած նյութերից չի ենթադրվում, որ դիմողներն այս կապակցությամբ փորձել են գանգատ ներկայացնել կամ 2001թ. հոկտեմբերի 5-ի գանգատի հետ մեկտեղ, կամ որևէ այլ առիթով: Դատարանն այնուհետև անհրաժեշտ չի համարում որոշել, թե արդյո՞ք դիմողներն ունեցել են պաշտպա-

նության արդյունավետ միջոց ընդդեմ ենթադրյալ խախտման, քանզի, եթե նույնիսկ ընդունվի, որ պաշտպանության նման միջոց գոյություն չի ունեցել, նրանք կալանքից ազատ են արձակվել 2000թ. հոկտեմբերի 5-ին, մինչդեռ նրանց գանգատը ներկայացվել է ավելի քան վեց ամիս հետո՝ 2002թ. նոյեմբերի 6-ին:

122. Ուստի Դատարանը կալանքի պայմանների վերաբերյալ դիմողների գանգատը ներկայացվել է ժամկետից ուշ և, հետևաբար, Դատարանը չի կարող անցնել այդ գանգատի ըստ էության քննությանը:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

A. Կողմերի փաստարկները

1. Կառավարությունը

123. Կառավարությունը Դատարանին խնդրել է գանգատն անընդունելի ճանաչել՝ պաշտպանության միջոցները չսպառելու պատճառաբանությամբ:

124. Կառավարությունը պնդել է, որ դիմողները կարող էին իրենց ձերբակալության կամ կալանքի օրինականությունը վիճարկել դատախազի մոտ կամ դատարանում: Այս կապակցությամբ Կառավարությունը նշել է, որ համապատասխան օրենսդրությունն ստեղծել է բողոքարկելու ցանկություն ունեցող կալանավորների պաշտպանության արդյունավետ համակարգ: Մասնավորապես, դատախազին ուղղված նրանց նամակները ներկայացվում էին կնքված ծրարներով և գրաքննության ենթակա չէ: Ավելին, նման նամակները, ինչպես նաև այլ մարմինների ուղղված գանգատները կամ փաստաբաններին ուղղված նամակները պետք է կալանավարի վարչակազմի միջոցով փոխանցվեին անհապաղ, և աշխատակիցները պատասխանատու էին այդ թղթակցությանը միջամտելու համար: Ըստ Կառավարության՝ դիմողներին իրենց կալանքի ընթացքում տրամադրվել է իրավական տեղեկատվություն, բայց նրանք կալանքի տակ գտնվելու ընթացքում որևէ նամակ կամ գանգատ չեն ուղարկել:

125. Կառավարությունը նաև փաստարկել է, որ դիմողներն ազատ արձակվելուց հետո կարող էին իրենց կալանքի դիմաց փոխհատուցում ստանալու պահանջով քաղաքացիական հայց հարուցել կամ Չեչնիայի դատարաններում, քանզի 2000թ. նոյեմբերից դատարաններն սկսել էին գործել այնտեղ, կամ հարևան տարածաշրջանների դատարաններում: Դիմողները կարող էին իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու դատախազի որոշումը բողոքարկել կամ Գլխավոր դատախազին կամ դատարան: Կառավարությունը պնդել է, որ դիմողները չեն օգտագործել պաշտպանության նշված միջոցներից ոչ մեկը:

126. Վերջապես, ըստ Կառավարության՝ դիմողները կարող էին, Քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները խախտող գործողությունների և որոշումների դեմ դատարան բողոքարկելու մասին օրենքին համապատասխան, դատական կարգով բողոքարկել իրենց դեմ հարուցված քրեական գործի վարույթի շրջանակներում իրավապահ մարմինների բոլոր գործողությունները, սակայն դա չեն արել:

2. Դիմողները

127. Դիմողները վիճարկել են Կառավարության առարկությունները:

128. Նրանք առաջին հերթին նշել են, որ 2000թ. իրենք չէին կարող արդյունավետորեն օգտագործել պաշտպանության որևէ միջոց Չեչնիայի Հանրապետությունում, քանզի իրավական համակարգը, ներառյալ՝ դատարանները, այնտեղ պատշաճորեն չէին գործում:

129. Դիմողները նաև պնդել են, որ Չեչնիայում դաշնային ուժերի ներկայացուցիչների կողմից կատարված հանցագործությունների կապակցությամբ իշխանությունների կողմից շարունակաբար պատշաճ հետաքննություն չիրականացնելու վարչական պրակտիկան հավանականորեն գոյություն ունեցող պաշտպանության ցանկացած միջոց իրենց գործում դարձնում է ոչ պատշաճ և պատրանքային: Այս կապակցությամբ նրանք վկայակոչել են Դատարան գանգատ ներկայացրած նույն ենթադրյալ խախտումներով այլ զոհերի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր և հասարակական կազմակերպությունների և մամուլի հրապարակումներ:

130. Դիմողները պաշտպանության միջոցներն սպառելու իրենց պարտավորությունը չկատարելը պատճառաբանել են նաև հատուկ հանգամանքների առկայությամբ, նշելով, որ կալանքի ընթացքում իրենց նկատմամբ դաժան վերաբերմունքի պատճառով՝ իրենց ազատ արձակվելուց հետո անմիջա-

պես իրավապահ սուբյեկտներին դիմելու հնարավորություն չեն ունեցել առողջական վատ վիճակի և բուժում ստանալու անհրաժեշտության պատճառով: Նրանք պնդել են նաև, որ իրենք իրենց զգացել են խոցելի, թույլ և պետության ներկայացուցիչներից ահաբեկված: Դիմողները նաև պնդել են, որ իրենց՝ 2002թ. հունվարի հայտարարություններից հրաժարվելու պահանջով ճնշման ենթարկվելուց հետո իրենք կորցրել են հավատը ներպետական պաշտպանության բոլոր միջոցների արդյունավետության նկատմամբ:

131. Նրանք պնդել են, որ, ամեն դեպքում, ազատ արձակվելուց հետո դատախազությունից պահանջել են քրեական գործ հարուցել վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց պնդումների առնչությամբ. նման քրեական գործը, իրենց կարծիքով, կլիներ պատշաճ պաշտպանության միջոց՝ հաշվի առնելով իրենց զանգատների բնույթը և Դատարանի համապատասխան պրակտիկան: Սակայն այս միջոցը ևս ապարդյուն էր, քանի որ, չնայած բժշկական փաստաթղթերով հավաստվող իրենց լուրջ և մահաբերական պնդումներին, ի պատասխան իրենց բողոքների իշխանությունները պասիվություն են դրսևորել և չեն գործել բավարար արագությամբ և հետևողականությամբ: Որևէ հետաքննություն չի իրականացվել և իրենց պահանջները մերժվել են առանց պատշաճ քննության: Ավելին, իրենց չի թույլատրվել նաև ծանոթանալ գործի նյութերին, նույնիսկ իրենց չի տրամադրվել 2002թ. հունվարի 2-ի որոշման պատճենը՝ հղում կատարելով նախկին օրենսդրությանը, չնայած նրան, որ իրենց պահանջի ներկայացման պահին արդեն ուժի մեջ էր նոր օրենսդրությունը, որը հնարավորություն էր տալիս ստանալու այդ որոշման պատճենը: Ուստի, այդպիսով, իրենք զրկվել են դատարան բողոքարկելու որևէ հնարավորությունից: Ավելին, այն ընթացքում, երբ իրենք կալանքի տակ էին, իրենց հարազատները պահանջել են քրեական գործ հարուցել անօրինական կալանքի, խուզարկության և առգրավումների կապակցությամբ: Սակայն այդ բոլոր պահանջները մերժվել են: Նման հանգամանքներում իրավապահ մարմինների աշխատողների կամ դաշնային զինված ուժերի ներկայացուցիչների դեմ ցանկացած քաղաքացիական հայց դատապարտված էր ձախողման, քանի որ երբեք պաշտոնական հետաքննություն չի իրականացվել այն փաստերի կապակցությամբ, որոնց վրա քաղաքացիական հայցերը պետք է հիմնվեին:

132. Ուստի դիմողները, հիմնվելով Աքդիվարը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործի վրա (1996թ. սեպտեմբերի 16-ի վճիռ, Ջեկույցներ 1996-IV), նշել են, որ պատասխանող Կառավարությունը չի հիմնավորել, որ իր կողմից մատնանշվող պաշտպանության միջոցներն արդյունավետ են, առկա են տեսականորեն և գործնականում, որ դրանք մատչելի են և ի գործ են վերականգնել դիմողների իրավունքները, ինչպես նաև տրամադրում են հաջողության հասնելու ողջամիտ հավանականություն:

B. Դատարանի գնահատականը

133. Դատարանը նկատում է, որ իր 2005թ. հունիսի 30-ի որոշման մեջ պաշտպանության միջոցներն սպառելու հարցը սերտորեն կապված է դիմողների զանգատի էության հետ և այն պետք է քննության առնվի գործի ըստ էության քննության հետ մեկտեղ: Այժմ Դատարանը պետք է գնահատի կողմերի փաստարկները Կոնվենցիայի դրույթների և իր համապատասխան պրակտիկայի լույսի ներքո:

1. Ընդհանուր նկատառումներ

134. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա պաշտպանության ներպետական միջոցներն սպառելու կանոնը դիմողներին պարտավորեցնում է առաջին հերթին օգտագործել պաշտպանության այն միջոցները, որոնք առկա են ներպետական համակարգում և բավարար են ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար: Պաշտպանության միջոցների գոյությունը պետք է բավականաչափ որոշակի լինի ե՛ւ տեսականորեն, և՛ գործնականում. այլապես այն զուրկ կլինի մատչելիությունից և արդյունավետությունից: 35-րդ հոդվածի 1-ին կետը նաև պահանջում է, որ Դատարան ներկայացվելիք զանգատը ներկայացված լինի նաև համապատասխան ներպետական մարմիններին՝ զոնե ըստ էության, և ներպետական օրենսդրությամբ սահմանված պայմաններին և ժամկետներին համապատասխան, և նաև ձեռնարկված լինեն բոլոր ընթացակարգային միջոցները, որոնք կարող էին կանխել Կոնվենցիայի խախտումը: Այնուամենայնիվ, ոչ պատշաճ կամ անարդյունավետ պաշտպանության միջոցներից օգտվելու պարտավորություն գոյություն չունի (տես Աքսոյն ընդդեմ Թուրքիայի, 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ 1996-VI, էջեր 2275-76, կետեր 51-52, վերոհիշյալ Աքդիվարը և այլոք, էջ 1210, կետեր 65-67, և բոլորովին վերջերս՝ Սենետ Այիան և Մեհմեդ Սալիհն Այիան ընդդեմ Թուրքիայի, թիվ 41964/98, կետ 64, 2006թ. հունիսի 27):

135. Այն պատասխանող Կառավարությունը, որը վիճարկում է պաշտպանության միջոցները չսպառելու հանգամանքը, պարտավոր է բավարար հստակությամբ մատնանշել պաշտպանության այն միջոցները, որոնք դիմողը չի սպառել և Դատարանին ապացուցել, որ այդ միջոցներն արդյունավետ են և տվյալ ժամանակահատվածում առկա են տեսականորեն և գործնականում, այն է՝ դրանք մատչելի են, ի գործ են վերականգնել դիմողների խախտված իրավունքները և ունեն հաջողության հասնելու հեռանկար (տե՛ս վերոհիշյալ Աբդիվարը և այլոք, էջ 1211, կետ 68, կամ վերոհիշյալ Սենետ Այիան և Մեհմեդ Սալիհն Այիան, կետ 65):

136. Ավելին, պաշտպանության միջոցներն սպառելու կանոնը պետք է կիրառվի որոշակի ճկունությամբ և առանց չափազանց ձևականության: Դատարանը նաև նկատում է, որ պաշտպանության միջոցներն սպառելու կանոնը ոչ բացարձակ է և ոչ էլ կարող է կիրառվել ինքնաբերաբար. այդ կանոնի պահպանումը զնահատելու համար էական նշանակություն պետք է տրվի տվյալ կոնկրետ գործի հանգամանքներին: Սա նշանակում է, որ Դատարանը պետք է իրատեսորեն հաշվի առնի ոչ միայն պայմանավորվող պետության իրավական համակարգում ձևական պաշտպանության միջոցների առկայությունը, այլ նաև այն ընդհանուր համատեքստը, որում դրանք գործում են, ինչպես նաև դիմողի անձնական հանգամանքները: Այնուհետև քննության առարկա պետք է դառնա այն հարցը, թե արդյոք գործի բոլոր հանգամանքների համատեքստում դիմողն արել է այն ամենը, ինչը նրանից ողջամտորեն սկսկալվում էր պաշտպանության միջոցները սպառելու նպատակով (տե՛ս վերոհիշյալ Աբդիվարը և այլոք, էջ 1211, կետ 69 և վերոհիշյալ Աքսոյը, էջ 2276, կետ 64, կետեր 53-54):

2. Կիրառումը սույն գործում

137. Դատարանը սկզբից ևեթ նկատում է, որ 2001թ. հոկտեմբերի 5-ին դիմողների ներկայացուցիչները կալանքի ընթացքում դիմողների նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի մասին բողոք են ներկայացրել շրջանային դատախազություն, և վերջինս 2002թ. հունվարի 7-ին մերժել է քրեական գործի հարուցումը: Այդ որոշման պատճենը երբևէ չի տրամադրվել դիմողներին՝ չնայած դրա վերաբերյալ հատուկ խնդրանքին: Այդ որոշման բողոքարկումը հանրապետական դատախազին եղել է ապարդյուն, և նրանք չեն դիմել դատարան:

138. Դատարանը նկատում է, որ Կառավարությունը փաստարկել է, որ դիմողները կարող էին դիմել Քլխավոր դատախազին: Այնուամենայնիվ, համոզիչ չէ, որ նման դիմումը կհանդիսանար պաշտպանության արդյունավետ միջոց ենթադրյալ վատ վերաբերմունքի կապակցությամբ պատշաճ հետաքննության բացակայության վերաբերյալ դիմողների գանգատի առնչությամբ: Ամենաբարձր դատախազներին վերապահված լիազորությունները հանդիսանում են պաշտպանության բացառիկ միջոցներ, որոնց օգտագործումը կախված է դատախազների հայեցողությունից: Դատարանը չի ընդունում այն պնդումը, որ դիմողներից պահանջվում էր սպառել պաշտպանության այս միջոցը՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները կատարած լինելու համար (Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 9790/99, 2003թ. հոկտեմբերի 14):

139. Ինչ վերաբերում է քրեական գործի հարուցումը քննչական մարմինների կողմից մերժելու դեմ դատարան դիմելուն, Դատարանն ընդունում է, որ սկզբունքորեն այս պաշտպանության միջոցը կարող է էական երաշխիք հանդիսանալ ընդդեմ քննչական մարմնի կողմից լիազորությունների կամայական իրականացման՝ հաշվի առնելով քրեական գործի հարուցման մերժումը չեղյալ հայտարարելու և շտկման ենթակա թերությունները մատնանշելու դատարանի իրավասությունը (տե՛ս վերոհիշյալ Տրուբնիկովը): Այնուամենայնիվ, Դատարանը լուրջ կասկածներ ունի առ այն, թե որքանով պաշտպանության այս միջոցն արդյունավետ կլիներ սույն գործի հանգամանքներում: Իր տրամադրության տակ եղած նյութերը բացահայտում են, որ դիմողները միայն ծանուցվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2002թ. հունվարի 7-ի որոշման մասին. նրանց չի տրամադրվել այդ որոշման պատճենը: Ավելին, այդ կապակցությամբ նրանց խնդրանքը մերժվել է: Առանց որոշման պատճենն ունենալու՝ հանրապետական դատախազին այդ որոշման բողոքարկման փորձն անհաջող է եղել. այդ բողոքին հետևել է միայն 2002թ. մայիսի 6-ի ստանդարտ կարճ պատասխանը (տե՛ս վերը՝ կետ 61):

140. Ըստ Դատարանի՝ նման հանգամանքներում դժվար թե դիմողներից սկսկալվեր ավելի հեռուն գնալ և դիմել դատարան: Անշուշտ, խիստ կասկածելի է նաև այն, որ 2002թ. հունվարի 7-ի որոշման պատճենը չունենալով՝ դիմողներն արդյոք կարող էին հայտնաբերել հետաքննության հնարավոր թերությունները և դրանք ներկայացնել ներապետական դատարանի ուշադրությանը, կամ ողջամիտ գանգատում ներկայացնել որևէ այլ փաստարկ, որը կարող էր գործին առնչվել: Այլ կերպ ասած, սույն գործի շրջանակներում դիմողները պետք է ունենային 2002թ. հունվարի 7-ի որոշումը դատարանում արդյունավետորեն բողոքարկելու իրական հնարավորություն:

141. Ելնելով վերոհիշյալից՝ Դատարանը գտել է, որ բավարար որոշակիությամբ չի հաստատվել, որ Կառավարության կողմից ներկայացված պաշտպանության միջոցն ունեցել է հաջողության ողջամիտ հեռանկար: Ուստի Դատարանը մերժում է նախնական առարկությունն այնքանով, որքանով դա վերաբերում է գանգատի այս հատվածին:

(b) Դիմողների՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա ներկայացված գանգատի առնչությամբ

142. Այս կապակցությամբ դիմողների ներկայացրած փաստարկները հաշվի առնելով՝ Դատարանն անհրաժեշտ է համարում այս հարցին անդրադառնալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա դիմողների գանգատն ըստ էության քննության առնելու շրջանակներում:

(c) Դիմողների՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա ներկայացված գանգատների առնչությամբ

143. Դիմողների՝ իրենց սեփականության խուզարկության և առգրավման վերաբերյալ գանգատների կապակցությամբ Դատարանը նկատում է, որ ներպետական օրենսդրությունը դիմողներին հնարավորություն էր տալիս իրենց իրավունքների ենթադրյալ խախտումները վիճարկել դատարանում (տես՝ կետեր 115-116): Դատարանը պատրաստ է ընդունել, որ 2000թ. հունվարից մինչև նոյեմբեր դիմողները չէին կարող դիմել իրենց իրավունքների դատական պաշտպանության, քանզի այդ ընթացքում Չեչնիայում դատական համակարգի գործունեությունն իսպառ դադարեցված էր. դիմողները դա չէին կարող անել նույնիսկ այդ ժամանակահատվածից հետո, քանի որ կալանքից ազատ արձակվելուց հետո բուժման կարիք ունեին: Այնուամենայնիվ, Դատարանը չի գտնում որևէ կոնկրետ հանգամանք, որը դիմողներին՝ անձամբ կամ նրանց հարազատներին կամ SRJI-ին թույլ չի տվել դիմել դատարան այն ժամանակ, երբ դատարաններն արդեն սկսել էին գործել՝ մասնավորապես հաշվի առնելով, որ խուզարկության և առգրավման վերաբերյալ բողոքները Զիտանների ընտանիքի անունից հիմնականում ներկայացվել են դիմողների հոր և եղբոր կողմից: Վերջինս, օրինակ, խուզարկության և առգրավումների վերաբերյալ շարունակաբար իրավապահ մարմիններին դիմել է ոչ միայն 2000թ., այլ նաև 2001-2002թթ. (տես՝ կետեր 51, 53 և 60): Այդ փորձերն արդյունք չեն տվել, սակայն Դատարանի համար պարզ չէ, թե ինչու խուզարկությունները և առգրավումները, ինչպես նաև իրավապահ մարմինների անգործությունը՝ նրանց բողոքների կապակցությամբ, չեն վիճարկվել դատարանում՝ 1995թ. դեկտեմբերի 14-ի Դաշնային օրենքի հիման վրա (տես՝ Պոպովը և Վորոբյովն ընդդեմ Ռուսաստանի (մասնակի որոշում), թիվ 1606/02, 2006թ. մարտի 2):

144. Հաշվի առնելով վերոհիշյալը և, մասնավորապես, գործի հանգամանքները՝ Դատարանը եզրահանգում է, որ դիմողներն իրենց վերոհիշյալ գանգատների առնչությամբ չեն սպառել պաշտպանության միջոցները: Ուստի Դատարանն ընդունում է Կառավարության նախնական առարկություններն այնքանով, որքանով դրանք վերաբերում են գանգատի այս հատվածին:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ

145. Դիմողները պնդել են, որ կալանքի ընթացքում իրենք ենթարկվել են խոշտանգումների, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի, և պետությունը չի իրականացրել պատշաճ հետաքննություն վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց պնդումների առնչությամբ: Դիմողները հիմնվել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա, որը նախատեսում է.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

A. Ենթադրյալ վատ վերաբերմունքն իշխանությունների կողմից

1. Կողմերի բացատրությունները

146. Դիմողները պնդել են, որ կալանքի ընթացքում ենթարկվել են դաժան վերաբերմունքի և, ի հիմնավորումն իրենց պնդումների՝ վկայակոչել են անմիջապես կալանքից ազատ արձակվելուց հետո ձեռք բերված բժշկական փաստաթղթերը: Դիմողները փաստարկել են, որ Կառավարության ներկայացրած տեղեկանքները չեն կարող համարվել իրենց պնդումները հերքող վճռորոշ ապացույցներ, քանի որ այդ փաստաթղթերը կազմվել են 2003թ. հոկտեմբերին և չեն պարունակում որևէ մանրամասնութ-

յուն այն բժշկական ստուգման մասին, որին իրենք ենթադրաբար ենթարկվել են Աչկո-Մարտանի VOVD-ից Չեռնոկոզովո SIZO փոխադրվելիս: Այս կապակցությամբ դիմողները նաև հիմնվել են այն փաստի վրա, որ Կառավարությունը չի ներկայացրել 2000թ. ապրիլին Չեռնոկոզովո SIZO ընդունվելուց հետո անմիջապես կազմված որևէ փաստաթուղթ, որը կազդեր դիմողների բժշկական ստուգման արդյունքների վրա: Դիմողները նաև նշել են, որ նույնիսկ Կառավարության ներկայացրած 2003թ. փաստաթղթերը վկայում են, որ առաջին դիմողն ունեցել է գլխի վնասվածք, սակայն Կառավարությունը դա վնասվածք չի համարել: Նրանք նաև հիմնվել են հասարակական կազմակերպությունների, եվրոպայի խորհրդի փաստաթղթերի և Դատարան ներկայացված այլ զանգատների վրա, որոնք հայտարարում են Չեչնիայում, մասնավորապես Չեռնոկոզովո կալանավայրում կալանավորների նկատմամբ տարածված վատ վերաբերմունքի դրսևորումների մասին:

147. Վկայակոչելով Չեռնոկոզովո SIZO-ի պետի 2003թ. հոկտեմբերի 21-ի տեղեկանքները՝ Կառավարությունը հերքել է դիմողների նկատմամբ կալանքի ընթացքում բռնություն կիրառելու փաստը: Կառավարությունը նաև պնդել է, որ Չեռնոկոզովո SIZO ընդունվելիս դիմողները ենթարկվել են բժշկական ստուգման և նրանց մոտ որևէ վնասվածք, բացի առաջին դիմողի գլխի վնասվածքից, որը նա նախկինում է ստացել, չի հայտնաբերվել: Կառավարությունը նաև նշել է, որ կալանքի տակ գտնվելու ընթացքում դիմողները կանոնավոր կերպով բժշկական օգնություն են ստացել. առաջին դիմողը՝ գլխի վնասվածքի, երկրորդը՝ քրոնիկ գաստրիտի: Կառավարությունը դիմողների կալանքից ազատվելուց հետո կազմված բժշկական փաստաթղթերի վերաբերյալ որևէ բացատրություն չի ներկայացրել:

2. Դատարանի գնահատականը

148. Դատարանը կրկնում է, որ իշխանություններն ունեն կալանքի տակ գտնվող անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանելու պարտավորություն: Եթե անձը ոստիկանության հսկողության տակ հայտնվելիս գտնվել է լավ առողջական վիճակում, սակայն ազատ արձակվելիս նրա մոտ հայտնաբերվել է վնասվածք, ապա պետությունը պարտավոր է տրամադրել համոզիչ բացատրություն այդ վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ: Այլապես, խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթադրությունը կարող է գործել հօգուտ զանգատվողի, և կարող է խնդիր ծագել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա (տե՛ս Տոմասին ընդդեմ Ֆրանսիայի, 1992թ. օգոստոսի 27-ի վճիռ, Շարքեր A թիվ 241-A, էջեր 40-41, կետեր 108-111, և Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 25803/94, կետ 87, ECHR-V):

149. Ապացույցները գնահատելիս՝ Դատարանը, որպես կանոն, կիրառում է «ողջամիտ կասկածից վեր» չափորոշիչը (տե՛ս Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության, 1978թ. հունվարի 18-ի վճիռը, Շարքեր A թիվ 25, էջեր 64-65, կետ 161): Այնուամենայնիվ, ապացույցը կարող է բխել բավականաչափ լուրջ, հստակ և փոխհամաձայնեցված եզրահանգումների կամ փաստի անհերքելի կանխավարկածների համակցությունից: Եթե խնդրո առարկա իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծամասամբ իշխանությունների բացառիկ իմացության շրջանակում են, ինչպես դա կալանքի ընթացքում նրանց վերահսկողության ներքո գտնվող անձանց պարագայում է, լուրջ կանխավարկած է ծագում այդ կալանքի ընթացքում առաջացած վնասվածքների կապակցությամբ: Անշուշտ, ապացուցման բեռն իշխանություններինն է. վերջինս պետք է ներկայացնի բավարար և համոզիչ բացատրություն (տե՛ս Ռիբիտչն ընդդեմ Ավստրիայի, 1995թ. դեկտեմբերի 4-ի վճիռ, Շարքեր A թիվ 336, կետ 34, և Սալմանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 21986/93, կետ 100, ECHR 2000-VII):

150. Դատարանը նկատում է, որ Աչկո-Մարտանի հիվանդանոցի բժիշկների կողմից՝ դիմողների ազատ արձակվելու հաջորդ օրը կազմված փաստաթղթերը վկայում են, որ նրանց գլխի, մարմնի և վերջույթների վրա եղել են բազմաթիվ վնասվածքներ (տե՛ս վերը՝ կետ 36): Կառավարությունը երբևէ չի վիճարկել այդ փաստաթղթերի իսկությունը կամ չի պնդել, որ այդ վնասվածքներն առաջացել են կալանքից առաջ կամ հետո: Կառավարությունը ոչինչ չի արել ավելին, քան Չեռնոկոզովո SIZO-ի պետի կողմից 2003թ. հոկտեմբերի 21-ին տրված այն տեղեկանքների վկայակոչումը, որոնք փաստում էին, որ Չեռնոկոզովո SIZO ընդունվելիս դիմողների վրա վնասվածքներ չեն հայտնաբերվել և կալանքի ընթացքում նրանց նկատմամբ քննության անօրինական որևէ մեթոդ չի կիրառվել: Կառավարությունը նաև վկայակոչել է ներպետական հետաքննության արդյունքները՝ նշելով, որ դիմողների պնդումները եղել են անհիմն:

151. Իր տրամադրության տակ եղած նյութերի հիման վրա Դատարանը Կառավարության փաստարկները համոզիչ չի համարում, քանզի ո՛չ ներպետական մակարդակում՝ իշխանությունները, ո՛չ - Կառավարությունը Դատարանում գործի վարույթի ընթացքում որևէ բացատրություն չեն տվել այն բժշկական փաստաթղթերի վերաբերյալ, որոնք փաստում էին դիմողների վնասվածքների առկայու-

յունը, և ոչ էլ տվել են որևէ բացատրություն այդ վնասվածքների առաջացման վերաբերյալ (տե՛ս Քլասն ընդդեմ Գերմանիայի, 1993թ. սեպտեմբերի 22-ի վճիռ, Շարքեր A թիվ 269, կետեր 29-33):

152. Հաշվի առնելով դիմողների հետևողական և մանրամասն պնդումները՝ ուղեկցված բժշկական փաստաթղթերով, Դատարանը գտնում է, որ Կառավարությունը համոզիչ կերպով չի հաստատել, որ դիմողների վնասվածքները՝ ամբողջությամբ, հիմնականում կամ մասամբ, պատճառվել են որևէ այլ կերպ, քան կալանքի տակ գտնվելու ընթացքում դիմողների նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի արդյունքում (տե՛ս վերոհիշյալ Ռիբիտչը, կետ 34):

153. Ինչ վերաբերում է վատ վերաբերմունքի դրսևորումներին, Դատարանը կրկնում է, որ այս կամ այն վատ վերաբերմունքի կոնկրետ ձևը խոշտանգում համարելիս՝ ինքը պետք է հաշվի առնի Կոնվենցիայի 3-րդ հոդվածում այս հասկացության և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջև առկա տարբերությունը: Ենթադրվում է, որ այս տարբերակման միջոցով Կոնվենցիան մտադիր է եղել հատուկ ընդգծել շատ ծանր և դաժան տառապանք պատճառող դիտավորյալ անմարդկային վերաբերմունքը: Դատարանը նախկինում ունեցել է գործեր, որոնցում գտել է, որ տվյալ վերաբերմունքը կարող է որակվել միայն որպես խոշտանգում (տե՛ս վերոհիշյալ Աքսոյը, էջ 2279, կետ 64, վերոհիշյալ Այդինը, էջեր 1891-92, կետեր 83-84 և 86, վերոհիշյալ Սելմուռնին, կետ 105, Դիքենն ընդդեմ Թուրքիայի, թիվ 20869/92, կետեր 94-96, ECHR 2000-VIII, բոլորովին վերջերս կայացված՝ Բաթին և այլոք ընդդեմ Թուրքիայի, թիվ 33097/96 և 57834/00, կետ 116, ECHR 2004-IV):

154. Ավելին, Դատարանը վկայակոչելով իր հստակ ձևավորված նախադեպային իրավունքը, նշում է, որ ազատությունից զրկված անձի առնչությամբ ֆիզիկական ուժի ցանկացած կիրառում, որն ուղղակիորեն չի թելադրվել տվյալ անձի վարքագծով, նսեմացնում է մարդկային արժանապատվությունը և սկզբունքորեն հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Դատարանը նկատում է, որ հետաքննության պահանջները և հանցավորության դեմ պայքարին ներհատուկ անհերքելի դժվարությունները չեն կարող արդարացնել անձանց ֆիզիկական անձեռնմխելիության առնչությամբ տրամադրվող պաշտպանության սահմանափակումները (տե՛ս վերոհիշյալ Տոմասին, էջ 42, կետ 115, վերոհիշյալ Ռիբիտչը, կետեր 38-40):

155. Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ֆիզիկական ցավը կամ տառապանքը հավաստված է 2000թ. հոկտեմբերի 6-ի բժշկական փաստաթղթերով և կալանքի ընթացքում կիրառված վատ վերաբերմունքի վերաբերյալ դիմողների հայտարարություններով, որոնցից հետևում է, որ ցավն ու տառապանքը նրանց պատճառվել են դիտավորությամբ, մասնավորապես՝ կատարված հանցագործությունների կապակցությամբ խոստովանություն կորզելու նպատակով (տե՛ս վերը՝ կետեր 20, 21 և 27):

156. Գանգատի առարկա գործողություններն այնպիսին էին, որ դիմողների մոտ առաջացրել են վախի, ցասումի և ցածրարժեքության զգացումներ, որոնք ի վիճակի էին նվաստացնելու և նսեմացնելու նրանց, և կարող էին կոտրել նրանց ֆիզիկական և բարոյական դիմադրությունը:

157. Այժմ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք դիմողներին պատճառված «ցավը կամ տառապանքը» կարող է համարվել «դաժան»: Դատարանը կրկնում է, որ «դաժան» հասկացությունը, Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պահանջվող «նվազագույն դաժանություն» հասկացության նման, հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, օրինակ, վերաբերմունքի տևողությունից, դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցությունից և, որոշ դեպքերում՝ զոհի սեռից, տարիքից և առողջական վիճակից (տե՛ս վերոհիշյալ Բաթին, կետ 120):

158. Սույն գործում, դիմողներն անվիճելիորեն պահվել են ֆիզիկական ցավի և անհանգստության մշտական վիճակում՝ հաշվի առնելով իրենց ճակատագրի վերաբերյալ անորոշությունը և բռնության այն աստիճանը, որին ենթարկվել են կալանքի տակ գտնվելու ընթացքում: Դատարանը գտնում է, որ նման վերաբերմունքը դիտավորությամբ դրսևորվել է պետության ներկայացուցիչների կողմից իրենց պարտականությունները կատարելու ընթացքում՝ դիմողներին մեղսագրվող հանցանքների կապակցությամբ խոստովանություն կամ տեղեկություններ կորզելու նպատակով:

159. Նման հանգամանքներում, Դատարանը եզրահանգում է, որ խնդրո առարկա վերաբերմունքը՝ իր ամբողջության մեջ, և հաշվի առնելով դրա նպատակը և դաժանությունը՝ որոշակիորեն ծանր է ու դաժան և ի վիճակի է առաջացնելու «դաժան» ցավ ու տառապանք և հանդիսանում է խոշտանգում՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

160. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Բ. Հետաքննության ենթադրյալ անպատշաճությունը

1. Կողմերի բացատրությունները

161. Դիմողները պնդել են, որ պետությունը թերացել է վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց արժանահավատ պնդումների կապակցությամբ արդյունավետ հետաքննություն իրականացնելու պարտականության մեջ: Նրանք պնդել են, մասնավորապես, որ իշխանություններն ուշադրության չեն արժանացրել իրենց վնասվածքների առկայությունը հավաստող բժշկական փաստաթղթերը և չեն կատարել բազմաթիվ իսկալական գործողություններ և, մասնավորապես, դիմողներին չեն ենթարկել բժշկական զննության, չեն կազմակերպել առերեսում Աչկո-Մարտանի VOVD-ի և Չերնոկոզովո SIZO-ի անձնակազմի հետ և չեն զննել այն վայրերը, որտեղ իրենք կալանքի տակ են պահվել: Դիմողները, ուստի, պնդել են, որ իշխանությունների կողմից իրականացված հետաքննությունը եղել է արհեստական և ոչ պատշաճ:

162. Կառավարությունը պնդել է, որ դիմողների անունից՝ կալանքի ընթացքում վատ վերաբերմունքի վերաբերյալ SRJI-ի կողմից ներկայացված գանգատի կապակցությամբ Չեչնիայի դատախազության իրականացրած հետաքննությունը պարզել է, որ նրանց պնդումներն անհիմն են: Ըստ Կառավարության՝ հետաքննության ընթացքում ձեռք չի բերվել որևէ տեղեկատվություն, որը կհավաստեր իրավապահ հաստատությունների աշխատակիցների կողմից դիմողների նկատմամբ անօրինական միջոցների կիրառումը: Հետևաբար, 2002թ. հունվարի 7-ին շրջանային դատախազությունը մերժել է վերոհիշյալ գանգատի կապակցությամբ քրեական գործի հարուցումը՝ իրավապահ հաստատությունների աշխատակիցների գործողություններում հանցակազմի բացակայության հիմնավորմամբ:

2. Դատարանի գնահատականը

163. Եթե անձը բարձրացնում է վիճելի գանգատ առ այն, որ ոստիկանության կողմից իր նկատմամբ դրսևորվել է վատ վերաբերմունք՝ ի խախտումն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, այդ դրույթը, դիտարկելով Կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված՝ «ապահովել իրենց իրավագործության տակ գտնվող յուրաքանչյուրի համար ... Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները»՝ պետությունների ընդհանուր պարտավորության հետ համակցության մեջ, պահանջում է, որ պետք է անցկացվի արդյունավետ հետաքննություն: Նման հետաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց հայտնաբերմանը և պատասխանատվությանը (տե՛ս Ասսենովը և այլք, 1998թ. հոկտեմբերի 28, Ձեկույցներ 1998-VIII, էջ 3290, կետ 102, և Լաբիտան ընդդեմ Իտալիայի, թիվ 26772/95, կետ 131, ECHR 2000-IV): Դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված՝ արդյունավետության նվազագույն չափորոշիչները պահանջում են նաև, որ հետաքննությունը լինի անկախ, անկողմնակալ և ենթակա հանրության հսկողությանը, և իրավասու մարմինները գործեն ջանասիրաբար և առանց հապաղելու (տե՛ս, օրինակ, Իսկան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 57947/00, 57948/00 և 57949/00, կետեր 208-213, 2005թ. փետրվարի 24):

164. Ինչ վերաբերում է սույն գործին, Դատարանը նկատում է, առաջին հերթին, որ Կառավարության ներկայացրած փաստաթղթերը (տե՛ս վերը՝ կետեր 93-95) վկայում են, որ դիմողների անունից SRJI-ի 2001թ. հոկտեմբերի 5-ին ներկայացրած գանգատի առնչությամբ իրականացված հետաքննության ընթացքում երկրորդ դիմողը որոշ պատճառներով հրաժարվել է վատ վերաբերմունքի վերաբերյալ իր պնդումներից, որից հետո շրջանային դատախազը 2002թ. հունվարի 7-ի որոշմամբ դադարեցրել է հետաքննությունը: Այնուամենայնիվ, դիմողների (որոնք գործել են իրենց ներկայացուցիչների միջոցով) 2002թ. մարտի 14-ի գանգատում վիճարկվել է նշված որոշումը՝ վկայակոչելով իրենց սկզբնական գանգատները և նշելով, որ երկրորդ դիմողը պարտադրվել է հրաժարվելու վատ վերաբերմունքի վերաբերյալ իր պնդումներից (տե՛ս վերը՝ կետ 58): Ելնելով նշվածից՝ Դատարանը գտնում է, որ բժշկական փաստաթղթերը և դիմողների գանգատները միասին առաջացնում են ողջամիտ կասկած առ այն, որ նրանց վնասվածքները կարող էին պատճառված լինել պետության ներկայացուցիչների կողմից, և այդ հարցը պատշաճորեն ներկայացվել է իրավասու մարմիններին: Վերջիններս, ուստի, պարտավոր էին իրականացնել արդյունավետ հետաքննություն՝ բավարարելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերոհիշյալ պահանջները:

165. Դատարանը նաև նկատում է, որ դիմողների՝ 2001թ. հոկտեմբերի 5-ի դիմողների գանգատից հետո որոշ հետաքննություն իրականացվել է (տե՛ս կետեր 55-59 և 61): Այնուամենայնիվ, համոզիչ չէ, որ այդ հետաքննությունն իրականացվել է ջանասիրաբար, կամ այն եղել է «արդյունավետ»: Դատարանն այս կապակցությամբ նկատում է, որ նույնիսկ, չնայած դիմողների գանգատները քննության են առնվել դատախազական մարմինների երկու մակարդակում, իշխանությունները երբևէ չեն անդրադարձել դիմողների բժշկական փաստաթղթերին, որոնք վերջիններս վկայակոչել են ի հիմնավորումն իրենց պնդումների: Ավելին, իշխանությունները չեն ձեռնարկել բազմաթիվ քայլեր, որոնք իսկալական նշանակություն կունենային պատշաճ հետաքննության իրականացման համար: Մասնավորապես, որևէ փորձ չի արվել դիմողների բժշկական հետազոտության կազմակերպման, դեպքի վայրի զննության

կամ տվյալ ժամանակահատվածում Աչկո-Մարտան VOVD-ի և Չեռնոկոզովո SIZO-ի աշխատակիցների ինքնությունը պարզելու և նրանց հարցաքննելու ուղղությամբ: Պարզ է դառնում նաև, որ ոչ դիմողների, ոչ էլ նրանց ներկայացուցիչների համար գործի նյութերը մատչելի չեն եղել, նրանց նույնիսկ չի տրամադրվել 2002թ. հունվարի 7-ի որոշման պատճենը:

166. Նման հանգամանքներում, Դատարանը պետք է եզրահանգի, որ իշխանությունները չեն իրականացրել լիարժեք և արդյունավետ հետաքննություն կալանքի տակ գտնվելու ընթացքում վատ վերաբերմունքի վերաբերյալ դիմողների պնդումների կապակցությամբ: Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՒ ԽԱԽՏՈՒՄ

167. Դիմողները գանգատ են ներկայացրել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1 (c) կետի հիման վրա՝ պնդելով, որ իրենց ձերբակալման համար գոյություն չի ունեցել որևէ հիմք, որ այն եղել է անօրինական և կատարվել է ներպետական օրենքով սահմանված ընթացակարգի խախտմամբ: Նրանք հիմնվել են նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետի վրա՝ պնդելով, որ իրենք անհապաղ չեն տեղեկացվել իրենց ձերբակալման և կալանքի պատճառների մասին: Նրանք նաև գանգատ են ներկայացրել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա՝ այն հիմնավորմամբ, որ իրենց շարունակվող կալանքի համար հիմքեր չեն եղել, և իրենք զրկված են եղել մինչև դատաքննության ավարտն ազատ արձակվելու իրավունքից: Նրանք նաև գանգատվել են, որ զրկված են եղել իրենց կալանքի անօրինականությունը դատարան բողոքարկելու հնարավորությունից, քանզի նրանց հեռու են պահել շփումներից և իրենք, ի խախտումն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի՝ զրկված են եղել իրենց պաշտպանի հետ շփվելու հնարավորությունից: Ավելին, իրենք գտնվել են մշտական վախի ներքո, որ բողոքելու դեպքում կենթարկվեն վատ վերաբերմունքի: Վերջապես, դիմողները գանգատվել են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա, որ զրկված են եղել իրենց կալանքի դիմաց փոխհատուցում հայցելու հնարավորությունից: Այդ հոդվածը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

...

c. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

A. Կողմերի բացատրությունները

168. Դիմողները պնդել են, որ իրենք կալանքի տակ են պահվել 2000թ. ապրիլի 12-ից մինչև հոկտեմբերի 5-ը, մինչդեռ Կառավարությունը նշել է, որ նրանք ձերբակալվել են 2000թ. ապրիլի 17-ին: Ըստ դիմողների՝ Կառավարությունը հաշվի չի առել 2000թ. ապրիլի 12-ից մինչև 17-ն ընկած ժամանակահատվածը: Նրանք նաև պնդել են, որ իրենց կալանավորելու համար հիմքեր գոյություն չեն ունեցել, քանզի իրենք չեն փորձել խուսափել քննությունից կամ խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը և ներգրավված չեն եղել որևէ քրեական գործունեության մեջ: Դիմողները պնդել են նաև, որ իրենք կալանքի տակ են գտնվել օրենքով սահմանված ժամկետից ավելի՝ առանց իրենց հետագա կալանքի պատշաճ թույլտվության: Դիմողները գանգատվել են, որ իրենց չի տրվել ձերբակալման հրամանի

պատճենը, և իրենք չեն տեղեկացվել այդ հրամանը վիճարկելու և այլ դատավարական իրավունքների մասին: Դիմողները պնդել են, որ իրենք պահվել են մեկուսի վիճակում՝ առանց իրենց պաշտպանի հետ շփվելու հնարավորության, ուստի և չեն կարողացել արդյունավետորեն վիճարկել իրենց կալանքը: Ըստ նրանց՝ իրենց միայն մեկ անգամ է թույլատրվել հանդիպել իրենց պաշտպանին, այն էլ՝ հսկիչների ներկայությամբ, և իրենց ստիպել են խոսել ռուսերեն և միայն իրենց ֆիզիկական վիճակի մասին: Այս փաստը հավաստվում է նաև Կառավարության ներկայացրած 2003թ. հոկտեմբերի 21-ի տեղեկանքով, որը վկայում է, որ դիմողների և նրանց պաշտպանի միջև հանդիպումը տեղի է ունեցել 2000թ. հունիսի 2-ին:

169. Կառավարությունը փաստարկել է, որ դիմողները կալանավորվել են օրինական հիմքով և օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան: Կառավարությունը, մասնավորապես, նշել է, որ նրանք սկզբում ձերբակալվել են Քրեական դատավարության օրենսգրքի 122 հոդվածի համաձայն 2000թ. ապրիլի 17-ին, և այդ ձերբակալությունը թույլատրված էր իրավասու դատախազի 2000թ. ապրիլի 19-ի որոշմամբ: Կառավարությունը պնդել է, որ դիմողները պատշաճորեն տեղեկացվել են իրենց ձերբակալության և կալանքի վերաբերյալ բոլոր դատավարական որոշումների, ինչպես նաև իրենց դատավարական իրավունքների մասին. այս փաստը հավաստվում է Կառավարության ներկայացրած՝ դիմողների ստորագրություններով համապատասխան փաստաթղթերով: Կառավարությունն այնուհետև նշել է, որ դիմողներն անմիջապես ծանուցվել են ձերբակալման պատճառների մասին. 2000թ. ապրիլի 20-ին նրանց դեմ պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել, նրանք տեղեկացվել են իրենց իրավունքների մասին և այդ կապակցությամբ ստորագրել են համապատասխան փաստաթուղթ: Կառավարությունը պնդել է նաև, որ կալանքը երկարացնելու որոշումները կայացվել են իրավասու պաշտոնատար անձանց կողմից՝ դատավարական օրենսդրությանը համապատասխան, և դիմողները կարող էին իրենց ձերբակալման և կալանքի երկարացման կապակցությամբ բողոք ներկայացնել դատարան: Այս կապակցությամբ Կառավարությունը նշել է, որ 2000թ. ապրիլի 25-ից հետո դիմողներին օգնություն է ցույց տվել պաշտպանը և նրանց տրամադրվել է իրավաբանական տեղեկատվություն: Կառավարությունը նաև պնդել է, որ կալանքից ազատ արձակվելուց հետո դիմողները հնարավորություն են ունեցել փոխհատուցում պահանջելու, եթե իրենց կալանքը համարել են անօրինական:

B. Դատարանի գնահատականը

1. Դիմողների կալանքը 2000թ. ապրիլի 12-ից մինչև 16-ը

170. Դատարանը նկատում է, որ թեև Կառավարությունը պնդել է, որ դիմողների ձերբակալումը տեղի չի ունեցել 2000թ. ապրիլի 17-ից առաջ, դիմողների պնդմամբ՝ իրենք կալանքի տակ են վերցվել 2000թ. ապրիլի 12-ին:

171. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած ապացույցները՝ Դատարանը նկատում է, որ դիմողները, ի հիմնավորումն իրենց պնդումների, ներկայացրել են ականատես վկաների՝ իրենց քրոջ և հարևանների ցուցմունքները, որոնք բոլորն էլ տալիս են 2000թ. ապրիլի 12-ի դեպքերի միմյանց չհակասող նկարագրություն՝ նշելով, որ այդ օրը դիմողները կալանավորվել են Հիտանների տունը խուզարկող ոստիկանների կողմից (տե՛ս վերը՝ կետ 78): Ավելին, պետական մարմիններին ինչպես դիմողների հարազատների, այնպես էլ հետազայում դիմողների հասցեագրած բազմաթիվ նամակներում որպես նրանց կալանքի վերցնելու օր է մատնանշվել 2000թ. ապրիլի 12-ը, սակայն այս փաստին իշխանությունները ուշադրություն չեն դարձրել: Ելնելով նշվածից՝ Դատարանը հաստատված է համարում, որ դիմողները պետության ներկայացուցիչների կողմից կալանքի են վերցվել 2000թ. ապրիլի 12-ին:

172. Դատարանը նաև շեշտադրում է 5-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների հիմնարար կարևորությունը՝ ժողովրդավարության պայմաններում իշխանությունների կողմից կամայական կալանքից ազատ լինելու անհատների իրավունքներն ապահովելու համար: Այդ համատեքստում, շարունակաբար ընդգծվել է, որ ազատությունից ցանկացած զրկում ոչ միայն պետք է կատարվի ներպետական իրավունքով սահմանված նյութական և դատավարական նորմերին համապատասխան, այլ նաև պետք է պահպանվի 5-րդ հոդվածի նպատակը, այն է՝ անհատին պաշտպանել կամայական կալանքից: Կամայական կալանքի վտանգը նվազեցնելու համար 5-րդ հոդվածը նախատեսում է մի խումբ նյութական իրավունքներ, որոնք միտված են ազատությունից զրկվելու դեպքերի նկատմամբ անկախ դատական վերահսկողություն և այդ միջոցի համար իշխանությունների պատասխանատվությունն ապահովելուն: Անձի չճանաչված կալանքը հանդիսանում է այս երաշխիքների լիովին մերժում և 5-րդ հոդվածի կոպիտ խախտում (տե՛ս, ի թիվս այլոց, Սակիկին ընդդեմ Թուրքիայի, թիվ 23657/94, կետ 104, ECHR 1999-IV):

173. Հաշվի առնելով իր վերոհիշյալ եզրահանգումն առ այն, որ դիմողները կալանքի են վերցվել 2000թ. ապրիլի 12-ին, և այն փաստը, որ Կառավարությունը չի ներկայացրել որևէ բացատրություն 2000թ. ապրիլի 12-ից մինչև 16-ը դիմողների կալանքի վերաբերյալ կամ հիմնավորող որևէ փաստաթուղթ՝ Դատարանը եզրակացնում է, որ այդ ժամանակահատվածում դիմողները պահվել են չճանաչված կալանքի տակ՝ անտեսելով 5-րդ հոդվածով ամրագրված երաշխիքները, և սա հանդիսանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածով ապահովվող՝ ազատության և անվտանգության իրավունքի կոպիտ խախտում:

2. Դիմողների կալանքի մնացած մասը

(a) Դատարանի վերահսկողության շրջանակը

174. Դատարանը նկատում է, որ դիմողների ազատ արձակման օրվա կապակցությամբ առկա է վեճ կողմերի միջև: Դիմողները պնդել են, որ իրենք ազատ են արձակվել 2000թ. հոկտեմբերի 5-ին, մինչդեռ ըստ Կառավարության՝ նրանք ազատ են արձակվել 2000թ. հոկտեմբերի 4-ին:

175. Դատարանն այս կապակցությամբ նկատում է, որ, ի տարբերություն 2000թ. ապրիլի 12-ից մինչև ապրիլի 16-ն իրենց չճանաչված կալանքի վերաբերյալ գանգատների, դիմողները չեն ներկայացրել համոզիչ ապացույց, օրինակ, ականատես վկաների ցուցմունքներ, որը կհաստատեր մինչև 2000թ. հոկտեմբերի 5-ը կալանքի տակ մնալու փաստը, մինչդեռ կողմերի ներկայացրած փաստաթղթերը (տես կետեր 50 և 94) հաստատապես վկայում են, որ դիմողներն ազատ են արձակվել 2000թ. հոկտեմբերի 4-ին: Հետևաբար, Դատարանը որպես դիմողների ազատ արձակման օր ընդունում է Կառավարության մատնանշած օրը, ուստի սահմանափակվում է 2000թ. ապրիլի 17-ից հոկտեմբերի 4-ը ժամանակահատվածի քննությամբ:

176. Դատարանը նաև նպատակահարմար է համարում առաջին հերթին անդրադառնալ 5-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա ներկայացված գանգատին՝ պարզելու համար, թե արդյոք դիմողներն սպառել են Կառավարության կողմից մատնանշված պաշտպանության միջոցները:

(b) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետ

177. Ըստ Դատարանի ձևավորված նախադեպային իրավունքի՝ ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի իրեն ազատությունից զրկելու դատավարական և նյութական պայմանների վերահսկողության, որոնք էական նշանակություն ունեն Կոնվենցիայի իմաստով «օրինականության» համար (տես Լիտգովն ընդդեմ Գերմանիայի, թիվ 24479/94, կետ 44, ECHR-2001-I): Վերահսկողության իրավունքը ծագում է ինչպես սկզբնապես ազատությունից զրկելու առնչությամբ, այնպես էլ հետագայում՝ պարբերաբար, երբ կարող են ծագել օրինականության այլ հարցեր (տես Հատչինսոն Ռեյդն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 50272/99, կետ 66, ECHR 2003-IV): Դատարանն այնուհետև կրկնում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետն առնչվում է միայն պաշտպանության այն միջոցներին, որոնք պետք է գոյություն ունենան անձի կալանքի տակ գտնվելու ընթացքում, որպեսզի տվյալ անձը կարողանա արագորեն օգտվել այդ կալանքի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունից, և որոնք կարող են, համապատասխան դեպքերում, հանգեցնել նրա ազատ արձակմանը: Այս դրույթը չի առնչվում այլ պաշտպանության միջոցների, թեև կարող են հնարավորություն տալ վերահսկելու կալանքի օրինականության այն ժամկետը, որն արդեն ավարտվել է (տես Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի, թիվ 48321/99, կետ 158, ECHR-2003-X):

178. Այս գործի առնչությամբ Դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել գանգատի այս հատվածի կապակցությամբ դիմողների ներկայացրած բոլոր փաստարկները, քանզի, ամեն դեպքում, պատասխանող Կառավարությունն ընդունել է, որ մինչև 2000թ. Չեչնիայի Հանրապետությունում դատարանները չէին գործում, մինչդեռ դիմողները կալանքի տակ են գտնվել 2000թ. ապրիլի 17-ից մինչև հոկտեմբերի 4-ը: Սրանից հետևում է, որ դիմողները տվյալ ժամանակահատվածում ի վիճակի չէին վիճարկելու իրենց կալանքի օրինականությունը:

179. Ուստի Դատարանը մերժում է Կառավարության նախնական առարկությունն այս մասով և գտնում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

(c) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (c) կետ

i. Ընդհանուր սկզբունքներ

180. Դատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում «օրինական» և «օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան» արտահայտությունները հիմնականում հղում են ներպետական իրավունքին և ամրագրում են ներպետական նյութական ու դատավարական նորմերին համապատասխան գործելու պարտավորությունը:

181. Այնուամենայնիվ, ներպետական իրավունքին համապատասխան «օրինականությունը» միշտ չէ, որ վճռորոշ տարր է հանդիսանում: Ի լրումն, Դատարանը պետք է նաև համոզվի, որ խնդրո առարկա ժամկետում կալանքը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին, այն է՝ կանխել անձին կամայականորեն ազատությունից զրկելը (տե՛ս, ի թիվս այլոց, Կուլոյորովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 6847/02, կետ 12, 2005թ. նոյեմբերի 8):

ii. Դիմողների կալանքը 2000թ. ապրիլի 17-ից մինչև հունիսի 18-ը

182. Հաշվի առնելով սույն գործում իրեն ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը նկատում է, որ պատասխանատու քննիչը, հիմք ընդունելով դիմողների տանը հայտնաբերված՝ հանցագործության հստակ հետքերը, քրեական դատավարության օրենսգրքի 122 հոդվածի համաձայն, 2000թ. ապրիլի 17-ին կարգադրել է դիմողներին ձերբակալել 48 ժամով: 2000թ. ապրիլի 19-ին շրջանային դատախազը թույլատրել է դիմողների կալանքը՝ հիմք ընդունելով նրանց մեղսագրվող արարքների ծանրությունը, ինչպես նաև փախուստի և ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելու վտանգը: Չնայած նրան, որ այս որոշմամբ չէր նշվում կալանքի ժամկետը, այնուամենայնիվ, ներպետական իրավունքին համապատասխան այն վավեր էր մինչև 2000թ. հունիսի 18-ը (տե՛ս կետ 109): Դատարանը, ուստի, ընդունում է, որ դիմողների կալանքը 2000թ. ապրիլի 17-ից մինչև հունիսի 18-ը եղել է օրինական:

183. Ավելին, Դատարանը գտնում է, որ նշված ժամանակահատվածում դիմողների կալանքը չի եղել նաև կամայական՝ հաշվի առնելով, որ 2000թ. ապրիլի 17-ի արձանագրությունը և 2000թ. ապրիլի 19-ի որոշումները տալիս են կալանքը հիմնավորող հստակ հիմքեր: Հետևաբար, Դատարանը չի գտնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ կապված 2000թ. ապրիլի 17-ից հունիսի 4-ը դիմողների կալանքի հետ:

iii. Դիմողների կալանքը 2000թ. հունիսի 19-ից մինչև հոկտեմբերի 4-ը

184. Դատարանն այնուհետև նկատում է, որ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ 2001թ. հունվարի 20-ի որոշումը մանրամասնորեն նկարագրում է այն դատավարական քայլերը, որոնք կատարվել են այդ քրեական վարույթի շրջանակներում: Այնքանով, որքանով դրանից կարելի է եզրակացնել, դիմողների կալանքի ժամկետը երկարացվել է միայն մեկ անգամ՝ 2000թ. օգոստոսի 7-ին, որով կարգադրվել է, որ դիմողները պետք է կալանքի տակ մնան մինչև 2000թ. հոկտեմբերի 9-ը:

185. Սրանից հետևում է, որ 2000թ. հունիսի 19-ից մինչև օգոստոսի 6-ը դիմողների կալանքն իր հիմքում չի ունեցել որևէ պաշտոնական ներպետական կարգադրություն, ուստի այն անօրինական է:

186. Ավելին, 2001թ. հունվարի 20-ի որոշումից պարզ չէ, թե որ մարմինը և ինչ հիմքով է կայացրել 2000թ. օգոստոսի 7-ի որոշումը, և արդյոք այդ որոշումը տրամադրվել է դիմողներին: Բացի դրանից, չնայած դիմողների կալանքի օրինականությանը վերաբերող բոլոր փաստաթղթերը ներկայացնելու Դատարանի պահանջներին՝ Կառավարությունը չի ներկայացրել 2000թ. օգոստոսի 7-ի որոշման պատճենը կամ դիմողների շարունակվող կալանքը հիմնավորող որևէ այլ ապացույց: Ելնելով նշվածից, նույնիսկ ընդունելով, որ 2000թ. օգոստոսի 7-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքը ներպետական իրավունքում ունեցել է իրավական հիմք, Դատարանը եզրակացնում է, որ այդ կալանքը կամայական է և հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (c) կետին:

187. Ելնելով վերոհիշյալից՝ Դատարանը գտնում է, որ 2000թ. հունիսի 19-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքի առնչությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (c) կետի խախտում:

(d) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետը

188. Դատարանը նկատում է, որ հաստատված է այն փաստը, որ դիմողները ձերբակալվել են 2000թ. ապրիլի 12-ին (տե՛ս վերը՝ կետ 171): Դատարանը նաև նկատում է, որ դիմողները պատշաճ կերպով չեն տեղեկացվել ձերբակալության պատճառների մասին գոնե մինչև 2000թ. ապրիլի 17-ը, երբ կազմվել է ձերբակալության արձանագրությունը և տրամադրվել նրանց: Այնուամենայնիվ, ելնելով վերոհիշյալ այն եզրահանգումից, որ 2000թ. ապրիլի 12-ից մինչև 16-ը դիմողների չճանաչված կալանքի կապակցությամբ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի երաշխիքների խախտում (տե՛ս վերը՝ կետ 173), Դա-

տարանն անհրաժեշտ չի գտնում քննության առարկա դարձնել խնդրո առարկա ժամանակահատվածում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետին ռուսաստանյան իշխանությունների վարքագծի համապատասխանության հարցը:

(e) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը

189. Դատարանը կրկնում է, որ իշխանությունները պետք է ապահովեն «համապատասխան» և «բավարար» պատճառաբանություն անձի շարունակվող կալանքի կապակցությամբ, որպեսզի այն արդարացվի և համապատասխանի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին (տե՛ս վերոհիշյալ Կուդոյո-րովը, կետ 174):

190. Հաշվի առնելով իր վերոհիշյալ եզրակացություններն առ այն, որ դիմողներն իրենց կալանքի ընթացքում զրկված են եղել ազատ արձակվելու խնդրանքով դիմելու հնարավորությունից (տե՛ս կետեր 178-179), և չի ներկայացվել դիմողների շարունակվող կալանքն արդարացնող որևէ ապացույց (տե՛ս վերը՝ կետ 189), Դատարանը կարող է եզրակացնել, որ դիմողները զրկված են եղել ողջամիտ ժամկետում դատաքննության ընթացքում կամ մինչև դատաքննության ավարտն ազատ արձակվելու իրավունքից:

191. Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

(f) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետ

192. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը երաշխավորում է այն անձանց փոխհատուցման իրավունքը, որոնց կալանքը կամ ներպետական իշխանությունների, կամ կոնվենցիոն մարմինների կողմից ճանաչվել է որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածին հակասող (տե՛ս Կամբերն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 28779/95, Հանձնաժողովի 1996թ. նոյեմբերի 27-ի որոշում), և այս իրավունքը, սկզբունքորեն, պահպանվել է, երբ հնարավոր է դիմել նման փոխհատուցման համար (տե՛ս Վասինկն ընդդեմ Նիդեռլանդների, թիվ 12535/86, կետ 38, 1990թ. սեպտեմբերի 27):

193. Սույն գործում, Դատարանն առաջին հերթին վկայակոչում է իր վերոհիշյալ եզրահանգումները 5-րդ հոդվածի 1(c) կետի, 3-րդ և 4-րդ կետերի խախտումների վերաբերյալ և նկատում է, որ, հետևաբար, 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է:

194. Այնուհետև Դատարանը նկատում է, որ ներպետական իրավունքի համաձայն՝ կալանավորված անձը կարող է փոխհատուցում հայցել տվյալ հանցագործությանն անձի մասնակցությունը հաստատող ապացույցի բացակայության հիմքով քրեական գործի կարճումից հետո (տե՛ս կետ 111): Դիմողների պարագայում քրեական գործը կարճվել և նորոգվել է երկու անգամ, այն է՝ 2000թ. հոկտեմբերի 9-ին և նոյեմբերի 23-ին, 2001թ. հունվարի 20-ին և 2003թ. հոկտեմբերի 29-ին՝ համապատասխանաբար: Ավելին, վերջին անգամ նորոգվելուց հետո, վարույթը դեռևս շարունակվում է:

195. Դատարանն այս կապակցությամբ գտնում է, որ մինչև 2000թ. նոյեմբերի վերջը Չեչնիայում դատական համակարգի չգործելու փաստը, ինչպես դա ընդունել է Կառավարությունը, և այն փաստը, որ ամեն դեպքում քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներից ոչ մեկը վերջնական չէ, ինչպես նաև այն փաստը, որ քրեական գործի վարույթը դեռևս շարունակվում է, տվյալ գործի հանգամանքներում դիմողներին արդյունավետորեն խոչընդոտել են հայցելու փոխհատուցում կալանքի դիմաց:

196. Ուստի Դատարանը մերժում է Կառավարության մախնական առարկությունն այս հատվածի կապակցությամբ և գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում՝ կապված դիմողների կալանքի ժամկետի հետ:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

197. Դիմողները պնդել են, որ իրենք չեն ունեցել որևէ արդյունավետ պաշտպանության միջոց ընդդեմ Կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածներով երաշխավորված իրենց իրավունքների խախտման, որով խախտվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

S. Կողմերի բացատրությունները

198. Դիմողները պնդել են, որ չնայած իրենց կալանքի և վատ վերաբերմունքի, ինչպես նաև խուզարկության և առգրավումների վերաբերյալ իրենց և իրենց հարազատների գանգատներին՝ իշխանությունները չեն ձեռնարկել որևէ մշանակալի քայլ, և որ դա հիմնավորում է այն, որ իրենք զրկված են եղել ներպետական արդյունավետ պաշտպանության միջոցներից:

199. Կառավարությունը նշել է, որ դիմողներն իրենց տարամադրության տակ ունեցել են արդյունավետ պաշտպանության միջոցներ, այն է՝ ներպետական իրավունքի համաձայն՝ իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների մասին դատախազներին կամ դատարան դիմելը:

B. Դատարանի գնահատականը

1. Հիմնական սկզբունքներ

200. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում պաշտպանության միջոցի առկայություն, որն իրացնում է Կոնվենցիայի իրավունքներն ու ազատություններն ըստ էության՝ անկախ ներպետական իրավակարգում դրա ապահովման ձևից: Ուստի 13-րդ հոդվածը պահանջում է նախատեսել այնպիսի ներպետական պաշտպանության միջոց, որը կվերաբերի Կոնվենցիայի հիման վրա «վիճելի գանգատի» էությանը և կտրամադրի պատշաճ հատուցում՝ չնայած նրան, որ պայմանավորվող պետություններն օժտված են որոշակի հայեցողությամբ այն ձևերի ընտրության հարցում, որով կբավարարեն Կոնվենցիայի այս հոդվածով նախատեսված պարտավորությունները: 13-րդ հոդվածով նախատեսված պարտավորության շրջանակը կախված է Կոնվենցիայի հիման վրա դիմողի գանգատի բնույթից: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանությունը պետք է լինի «արդյունավետ» գործնականում և իրավական տեսանկյունից, մասնավորապես, այն իմաստով, որ այդ միջոցի կիրառումը չպետք է անհիմն կերպով խոչընդոտվի պատասխանող պետության իշխանությունների գործողություններով կամ անգործությամբ (տե՛ս վերոհիշյալ Այդինը, կետ 103):

2. Կիրառումը սույն գործում

(a) Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա դիմողների գանգատի առնչությամբ

201. Երբ անձը ներկայացնում է վիճելի գանգատ առ այն, որ ինքը ենթարկվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վատ վերաբերմունքի, արդյունավետ պաշտպանության միջոցի հասկացությունը, ի լրումն՝ նաև 3-րդ հոդվածով պահանջվող բազմակողմանի և արդյունավետ հետաքննությունը, ենթադրում է դիմողի համար հետաքննության ընթացքի արդյունավետ մատչելիություն և անհրաժեշտության դեպքում փոխհատուցման վճարում (տե՛ս վերոհիշյալ Աքսոյը, էջեր 2286-87, կետ 95 և 98, և վերոհիշյալ Ասստենովը և այլոք, կետ 117):

202. Դատարանը վկայակոչում է իր վերոհիշյալ եզրահանգումներն առ այն, որն դիմողներն ունեցել են վիճելի գանգատ իշխանության ներկայացուցիչների կողմից վատ վերաբերմունքի ենթարկված լինելու վերաբերյալ, և այդ կապակցությամբ ներպետական հետաքննությունը եղել է ոչ պատշաճ (տե՛ս կետեր 153 և 167): Հետևաբար, դիմողների համար առկա որևէ այլ պաշտպանության միջոց, ներառյալ՝ փոխհատուցման պահանջը, ունեին հաջողության սեղմ հնարավորություններ: Թեև քաղաքացիական դատարաններն ունեն փաստերի անկախ գնահատման կարողություն, գործնականում քրեական գործով նախաքննությանն այնքան մեծ կշիռ է հաղորդվում, որ հայցվորի կողմից ներկայացվող՝ հակառակը հիմնավորող նույնիսկ ամենահամոզիչ ապացույցը հաճախ մերժվում է որպես «ոչ վերաբերելի» ապացույց (տե՛ս Մենեշևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 59261/00, կետ 76, 2006թ. մարտի 9):

203. Ուստի Դատարանը գտնում է, որ դիմողներին մերժվել է ներպետական արդյունավետ պաշտպանության միջոցը՝ ոստիկանության կողմից իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի կապակցությամբ: Հետևաբար, տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում՝ կապված Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ:

(b) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա դիմողների գանգատի առնչությամբ

204. Դատարանի հստակ ձևավորված նախադեպային իրավունքի լույսի ներքո, ըստ որի՝ 5-րդ - հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի առավել հստակ երաշխիքները 13-րդ հոդվածի առնչությամբ լինելով *lex specialis*, կլանում են դրա պահանջները (տե՛ս Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի (*dec.*) թիվ 55861/00,

2006թ. մայիսի 9) և հաշվի առնելով 2000թ. ապրիլի 12-ից մինչև 16-ը դիմողների կալանքի առնչությամբ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի և 2000թ. ապրիլի 17-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքի առնչությամբ 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի խախտման վերաբերյալ իր վերոհիշյալ եզրահանգումները՝ Դատարանը գտնում է, որ սույն գործի հանգամանքներում 13-րդ հոդվածի հիման վրա՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հետ կապակցված, առանձին խնդիր չի ծագում:

V. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1 (a) ԿԵՏԻՆ

205. Գործի հանգամանքների վերաբերյալ իրենց բացատրություններում դիմողները պնդել են, որ պետությունը խախտել է Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իր պարտավորությունը, քանի որ չի ներկայացրել դիմողների դեմ հարուցված ողջ քրեական գործը: Այս հոդվածը սահմանում է.

«1. Եթե Դատարանը զանգատը հայտարարում է ընդունելի, այն՝

a. նախաձեռնում է գործի քննությունը կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ և, եթե անհրաժեշտ է, իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող պետություններն ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները,...»:

206. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի հիման վրա անհատական զանգատների համակարգի արդյունավետ գործունեության համար նշանակալի կարևորություն ունի այն հանգամանքը, որ պետությունները պետք է ապահովեն բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի հնարավոր դառնա զանգատների պատշաճ և արդյունավետ քննությունը (տե՛ս Տանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 23763/94, կետ 70, ECHR 1999-IV): Այս պարտավորությունը պայմանավորվող պետություններից պահանջում է Դատարանին տրամադրել բոլոր անհրաժեշտ հարմարությունները՝ անկախ նրանից՝ Դատարանն իրականացնում է փաստերի հաստատման քննություն, թե իրականացնում է իր ընդհանուր պարտականությունները՝ կապված զանգատի քննության հետ: Կառավարությունների կողմից իրենց տրամադրության եղած տեղեկատվությունն առանց բավարար պատճառաբանության չներկայացնելը կարող է ոչ միայն հանգեցնել դիմողների պնդումները հիմնավորված համարելուն, այլ նաև կարող է բացասական հետևանքներ ունենալ Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 1-ին (a) կետի հիման վրա՝ պատասխանող պետության կողմից իր պարտավորություններին համապատասխանության մակարդակում (տե՛ս Տիմուրտասն ընդդեմ Թուրքիայի, թիվ 3531/94, կետ 66, ECHR 2000-VI):

207. Դատարանը նկատում է, որ ընդունելիության վերաբերյալ որոշումից հետո Կառավարությանն առաջարկվել է ներկայացնել ընդունելի ճանաչված՝ դիմողների զանգատներին վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները և ոչ թե դիմողների դեմ հարուցված քրեական գործի նյութերի պատճենները: Ի պատասխան, Կառավարությունը ներկայացրել է բազմաթիվ փաստաթղթեր, ներառյալ՝ 2000թ. ապրիլի 17-ի ձերբակալության արձանագրությունը, 2000թ. ապրիլի 19-ի կալանքի թույլտվությունը, դիմողների դեմ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ 2001թ. հունվարի 20-ի որոշումը, ինչպես նաև այդ որոշումը վերացնող և դիմողների դեմ քրեական գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ 2003թ. հոկտեմբերի 29-ի որոշումը: Այս փաստաթղթերի ներկայացումն զգալիորեն դյուրացրել է սույն գործի քննությունը Դատարանի կողմից: Թեև ճիշտ է, որ որոշ փաստաթղթեր, մասնավորապես, դիմողների կալանքի ժամկետի երկարացմանը կամ դիմողների տանը 2000թ. հունվարի 15-ին և ապրիլի 12-ին իշխանությունների կողմից ձեռնարկված գործողություններին վերաբերող փաստաթղթերը, Կառավարության կողմից չեն ներկայացվել, Դատարանն այս կապակցությամբ արդեն եզրահանգումներ արել է և արձանագրել Կոնվենցիայի համապատասխան հոդվածների խախտումներ: Բացի դրանից, Դատարանը չի գտնում, որ Կառավարության վարքագիծը սույն գործում հակասում է 38-րդ հոդվածի 1-ին (a) կետին:

208. Ուստի Դատարանը գտնում է, որ պատասխանող Կառավարությունը չի թերացել Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 1-ին (a) կետին համապատասխան գործելու հարցում:

VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

209. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի

հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Վնասը

210. Դիմողները պահանջել են 35.000 եվրո և 40.000 եվրո համապատասխանաբար՝ իշխանությունների կողմից իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի և անօրինական կալանքի արդյունքում պատճառված վնասների, ինչպես նաև տառապանքի ու անհանգստության և իրենց գանգատների առնչությամբ քննություն չիրականացնելու կապակցությամբ ոչ նյութական վնասի դիմաց:

211. Կառավարությունը նշել է, որ դիմողների պահանջները չափազանցված են և Դատարանի կողմից դիմողների իրավունքների խախտում արձանագրելու դեպքում խորհրդանշական գումարը բավարար կլինի:

212. Դատարանը նկատում է, որ ինքը գտել է, որ իշխանությունները դիմողներին ենթարկել են խոշտանգումների և Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին համապատասխան չեն իրականացրել արագ և հրապարակային քննություն: Հաստատվել է նաև, որ դիմողներն ազատությունից զրկվել են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտմամբ: Ի լրումն՝ դիմողները, ի խախտումն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի, չեն ունեցել ներպետական արդյունավետ պաշտպանության միջոցներ՝ ներպետական մակարդակում իրավունքների վերականգնման համար: Դիմողները բոլոր այս հանգամանքներում կրել են տառապանք և անհանգստություն: Հաշվի առնելով բոլոր այս հիմնավորումները՝ Դատարանը դիմողներին տրամադրում է 35.000-ական եվրո՝ ոչ նյութական վնասի դիմաց՝ ավելացրած ցանկացած հարկ, որը կարող է գանձվել այդ գումարից:

B. Ծախսեր և ծախքեր

213. Դիմողներին ներկայացնում էին SRJI-ի իրավաբանները: Նրանք ներկայացրել են ծախսերի և ծախքերի ժամանակացույց, որում ներառվել են Ինգուլշեթայում և Մոսկվայում կատարված ուսումնասիրությունները և հարցազրույցները՝ յուրաքանչյուր ժամի համար 50 եվրո, Դատարանին և ներպետական իշխանություններին ներկայացվող իրավական փաստաթղթերի կազմումը՝ յուրաքանչյուր ժամի համար 50 եվրո՝ SRJI-ի իրավաբանների համար և 150 եվրո՝ SRJI-ի ավագ անձնակազմի համար: Ծախսերի և ծախքերի վերաբերյալ հիմնական պահանջը վերաբերում էր դիմողների իրավական ներկայացուցչությանը, որը կազմում էր 8.344.90 եվրո և ներառում.

- 350 եվրո՝ սկզբնական գանգատը կազմելու համար,
- 2.150 եվրո՝ ամբողջական գանգատը կազմելու և լրացուցիչ բացատրությունների համար,
- 375 եվրո՝ Դատարանի հետ լրացուցիչ մամակագրությունը պատրաստելու համար,
- 750 եվրո՝ Դատարանի ընդունելիության մասին որոշմանը դիմողների պատասխանը պատրաստելու համար,
- 1.250 եվրո՝ ներպետական իրավակիրառ մարմիններին ներկայացված իրավական փաստաթղթերի պատրաստման համար,
- 582.75 եվրո՝ վարչական ծախսերի համար,
- 137.15 եվրո՝ Դատարանի հետ միջազգային փոստային ծախսեր:

214. Կառավարությունը չի վիճարկել դիմողների ներկայացրած հաշվարկների մանրամասները, սակայն պնդել է, որ պահանջվող գումարը այնպիսի հասարակական կազմակերպության համար, ինչպիսին դիմողներին ներկայացնող SRJI կազմակերպությունն է, չափազանցված է:

215. Դատարանն առաջին հերթին պետք է պարզի, թե արդյոք դիմողների մատնանշած ծախսերն ու ծախքերը փաստացիորեն կատարվել են, և երկրորդ, թե արդյոք դրանք անհրաժեշտ էին (տե՛ս վերոհիշյալ Իսահան և այլոք, կետ 256):

216. Դատարանը նկատում է, որ 2000թ. հուլիսին երկու դիմողներն էլ լիազորագիր են տվել՝ լիազորելով SRJI-ի իրավաբաններին՝ իրենց շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայացնելու համար: Դատավարության ողջ ընթացքում դիմողներին ներկայացրել են SRJI-ի իրավաբանները: Հաշվի առնելով SRJI-ի իրավաբանների և ավագ անձնակազմի աշխատանքի վարձատրության չափը՝ Դատարանը գտել է, որ այդ չափը ողջամիտ է և արտահայտում է դիմողների ներկայացուցիչների կողմից փաստացիորեն կատարված ծախսերը:

217. Այնուհետև, պետք է պարզել, թե արդյոք դիմողների կողմից իրավական ներկայացուցչության համար կատարված ծախսերը եղել են անհրաժեշտ: Դատարանը նկատել է, որ այս գործը բավականին

բարդ էր, հատկապես հաշվի առնելով փաստաթղթային ապացույցների մեծ ծավալը, և պահանջում էր ներկայացուցիչների կողմից հետազոտություններ և նախապատրաստում:

218. Այս հանգամանքներում, և հաշվի առնելով դիմողների ներկայացրած պահանջների մանրամասները՝ Դատարանը տրամադրում է ողջ գումարը՝ 8.344.90 եվրո, դրան գումարած ցանկացած հարկ, ներառյալ ավելացված արժեքի հարկը, որը կարող է գանձվել: Ծախսերի և ծախքերի դիմաց տրամադրվող փոխհատուցումը պետք է դիմողներին վճարվի ուղղակիորեն:

C. Տոկոսներ՝ չվճարելու դեպքում

219. Դատարանը գտնում է, որ չվճարելու դեպքում պետք է վճարվեն տոկոսներ՝ հիմնված եվրոպական կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վրա, որը պետք է ավելացվի երեք տոկոսանոց կետով:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. *Վճռում է*, որ ինքը չի կարող քննության առնել դիմողների՝ իրենց կալանքի պայմանների կապակցությամբ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա ներկայացված գանգատը, քանի որ այն չի ներկայացվել ժամանակին,

2. *Մերժում է* Կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածների հիման վրա դիմողների գանգատների կապակցությամբ ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության նախնական առարկությունը,

3. *Ընդունում է* Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա դիմողների գանգատների կապակցությամբ ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության նախնական առարկությունը և *վճռում է*, որ ինքը չի կարող քննության առնել դիմողների այս գանգատները՝ ներպետական պաշտպանության միջոցներն այդ կապակցությամբ սպառած չլինելու պատճառով,

4. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ դիմողների նկատմամբ կիրառված վերաբերմունքի կապակցությամբ,

5. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված վատ վերաբերմունքի վերաբերյալ դիմողների պնդումների առնչությամբ արդյունավետ հետաքննություն չանցկացնելու հետ,

6. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում՝ կապված 2000թ. ապրիլի 12-ից մինչև 16-ը դիմողների չճանաչված կալանքի հետ,

7. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում՝ կապված 2000թ. ապրիլի 17-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքի նկատմամբ դատական վերահսկողության բացակայության հետ,

8. *Վճռում է*, որ 2000թ. ապրիլի 17-ից մինչև հունիսի 18-ը դիմողների կալանքի առնչությամբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (c) կետի խախտում տեղի չի ունեցել,

9. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (c) կետի խախտում՝ կապված 2000թ. հունիսի 19-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքի հետ,

10. *Վճռում է*, որ անհրաժեշտ է առանձին եզրակացություն տալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ - կետի հիման վրա՝ 2000թ. ապրիլի 17-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքի կապակցությամբ,

11. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ կապված 2000թ. ապրիլի 17-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքի ընթացքում՝ մինչև դատաքննության ավարտն ազատ արձակվելու իրավունքի հետ,

12. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում՝ կապված 2000թ. ապրիլի 17-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիմողների կալանքի դիմաց փոխհատուցման իրավունքի հետ,

13. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ կապված Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումների հետ,

14. *Վճռում է*, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտումների առնչությամբ Կոնվենցիայի 13-րդ - հոդվածի հիման վրա առանձին խնդիր չի ծագում,

15. *Վճռում է*, որ Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 1-ին (c) կետի պահանջները կատարվել են,

16. *Վճռում է*.

(a) որ Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան սույն վճռի ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում պատասխանող պետությունը պետք է դիմողին վճարի հետեւյալ գումարները. բոլոր գումարները պետք է փոխարկելի լինեն ռուսական ռուբլու՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքի համաձայն.

(i) 35.000 եվրո՝ յուրաքանչյուր դիմողին՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում,

(ii) 7.629.90 եվրո՝ կապված ծախսերի և ծախքերի հետ, որը պետք է վճարվի Նիդեռլանդներում դիմողների ներկայացուցիչների բանկային հաշվին,

(iii) ցանկացած հարկ, որը կարող է գանձվել այդ գումարներից,

(b) որ վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարումը վերոհիշյալ գումարներին պետք է հավելվի սովորական տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույթով, որը պետք է ավելացվի երեք տոկոսանոց կետով:

17. Մերժում է դիմողի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ծանուցված է 2007թ. հունվարի 18-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն: